

Ս. Ս. ԱՐԱՔՍՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2000

Ա. Մ. ԱՐԱՔՍՅԱՆ

**ՎԵՐԼՈՒԹԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ
ԳՈՐԺՆԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

I ՄԱՍ ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ ԼՈՒՅՍ 1991

Գրախոսների՝ քիմ. գիտ. թեկնածու Փ. Ասուխանյան
քիմ. գիտ. թեկնածու Գ. Վարդենյան

Ս. Մ. Արախյան

Ա. 852 Վերջնական քիմիայի դործնական աշխատանքներ. մաս 1.
որակական վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ գյուղատն-
տեսական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան,
Լույս, 1991 թ. 140 էջ:

Ձեռնարկում շարադրված են անօրգանական միացությունների
վերլուծության մեթոդները և իրագործման տեխնիկան: Վերլուծության
ընթացքը նկարագրելիս, սեպտիաների քիմիկոս նկարագրելու հետ մեկ-
տեղ, ցուցումներ են տրված առանձին գործողությունների իրականացման
մասին: Ձեռնարկը ուղեկցվում է համապատասխան աղյուսակներով
և սխեմաներով:

4306010600 (ՅՕ)

Ա 702 (01) 1991

Հայտարարված 1991 թ. ԳՐԴ 24.4 ց 73

С. М. АРАКСЯН

Лабораторные работы по аналитической химии (ч. 1)

Часть I Качественный анализ

(на армянском языке)

Ереван «Луйс», 1991

ISBN 5-545-00856-X

© Հեղինակ Ս. Մ. ԱՐԱՔՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գործնական աշխատանքների սույն ձեռնարկը դրված է «Վեր-
լուծական քիմիա» դասընթացին համապատասխան:

Ձեռնարկում նշված է այն տեսական բաժինների անվանու-
ցանկը, որոնք ուսանողներն արդեն լուրջ բերք են բերել հանուր
քիմիայի տեսությունից: Ուսուցիչ ձեռնարկի որևէ դրսի ուսումնասի-
րումից առաջ ուսանողը պարտավոր է կրկնել համապատասխան
տեսական հարցերը: Յուրաքանչյուր դրսի, բացի դրանից, եղրա-
վակվում է ստուգողական հարցերով ու տնային հանձնարարու-
թյուններով, որոնց կատարումը կնպաստի յուրացրած նյութի
ամրապնդմանը: Ինչ չափորատոր աշխատանքը ավարտվում է
ներկայացվում է գումարի հաշվետվությամբ, որը ձևավորվում է
հետ հաշվարկվածով բերված սխեմայի:

Ուսանողները որակական վերլուծության ուսումնասիրմանն
անցնելուց առաջ պետք է ծանոթանան կիսամիկրոմեթոդի տեխ-
նիկային, քիմիական վերլուծության մեջ օգտագործվող ապակեղե-
նին և սարքավորումներին: Նրանք պետք է տիրապետեն քիմիա-
կան բարդատարիչում աշխատելու կանոններին, անվտանգության
տեխնիկային և հակահրդեհային միջոցներին, ինչպես նաև կարո-
ղանա՞ն առաջին օգնությունը ցույց տալ այրվածքների կամ այլ
վնասվածքների դեպքում:

Կիսամիկրոմեթոդը, որպես վերլուծության եղանակ, մտկորմե-
թոդի համեմատությամբ ունի զգալի առավելություններ: Այն նը-
րսատում է նյութերի տեսականը և մեծ չափով կրճատում վեր-
լուծության ծավալները: Ներկա ձեռնարկում կիրառվել է վերլու-
ծության դասական՝ ծծմբաջրածնական մեթոդը՝ ելնելով նրանից,
որ այն նպաստում է ուսանողների քիմիական մտածելակերպի
զարգացմանը:

Շարադրված նյութի ծավալը համապատասխանեցված է ծը-
րագրին և որակական վերլուծությանը հատկացված ժամաքանու-
կին:

Կանխատեսելով, որ ձեռնարկը գերծ չի լինի թերություննե-
րից, հեղինակը գոհունակությամբ ու հոգատադիսությամբ կրն-
դունի բոլոր այն դիտողությունները, որոնք կբարելավեն նրա հե-
տագա հրատարակումը:

ՀՆՂԻՆԱԿ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վերլուծական քիմիան գիտությունն այն բնագավառն է, որն ուսումնասիրում է նյութի բաղադրությունը որոշելու մեթոդները: Այն բաղկացած է երկու բաժնից՝ ա) ուսական վերլուծություն, բ) քանակական վերլուծություն:

Որակական վերլուծության խնդիրն է բացահայտել նյութի (կամ նյութերի որևէ համակարգի) որակական կազմը, այսինքն՝ որոշել, թե այն ինչ ատոմներից, ատոմների խմբերից կամ իոններից է բաղկացած: Իսկ քանակական վերլուծությունը, այնուհետև պարզում է, թե նյութի (կամ խառնուրդի) որոշված բաղադրամասերը ինչ քանակական հարաբերության մեջ են գտնվում: Այսպիսով, նյութի քիմիական բաղադրության հետազոտումը սկսում են նրա որակական վերլուծությունից, այնուհետև անցնում քանակական տվյալների որոշմանը:

Զափազանց մեծ է վերլուծական քիմիայի դերն ու նշանակությունը ինչպես արդյունաբերության ու գյուղատնտեսության բազմաթիվ բնագավառներում, նույնպես և բնագիտական, հասակապես քիմիական առարկաների ուսուցման գործում: Բազմաթիվ արդյունաբերական պրոցեսներ սկզբից մինչև վերջ կարգավորվում ու անընդհատ հսկողության տակ են պահվում քիմիական վերլուծության տվյալների հիման վրա: Գյուղատնտեսության բնագավառում առանց այդ տվյալների հնարավոր չէ ժամանակակից, գիտականորեն հիմնավորված արտադրություն վարել:

Կենսաբանության, բժշկության, երկրաբանության, ատոմային ֆիզիկայի և մի շարք այլ բնագավառների գծով գիտահետազոտական աշխատանքների եղրահանգումները հաճախ հիմնավորվում ու հաստատվում են քիմիական վերլուծության տվյալների միջոցով:

Վերլուծական քիմիան կարելի է ասել, մի հզոր միջոց է նյութական աշխարհը լավագույնս ճանաչելու, նրա զարգացման մեջ առավել խորը թափանցելու և այդ ձևով ստացված տվյալները մարդկային հասարակության բարեկեցությանը ծառայեցնելու համար:

Նյութի որակական բաղադրությունը հետազոտելու համար օգտագործվում են վերլուծության ինչպես քիմիական, այնպես էլ ֆիզիկաքիմիական ու ֆիզիկական մեթոդներ¹:

Քիմիական մեթոդները հենվում են այնպիսի քիմիական ռեակցիաների վրա, որոնց տվյալներով կարելի է համոզվել եղրահանգումներ անել նյութի այն կամ այն բաղադրամասերի մասին:

Որակական վերլուծության քիմիական մեթոդները խոստովանում են երկու՝ «չոր» և «թաց» եղանակներով:

Չոր եղանակի դեպքում ինչպես ռեակտիվը, այնպես և վերլուծվող նյութը գտնվում են չոր վիճակում: Դրանց խառնուրդը պահում են ալյուրի բոցի մեջ, միահալում՝ ստանալով այնպես կոշված գունավոր մարգարտահատիկներ (pearls), որոնց բնորոշ գույնի հիման վրա համապատասխան երրահանգումներ են անում: Այս եղանակով որոշվում են նյութի այն բաղադրամասերը, որոնք բորաքսի ($\text{Na}_2\text{B}_4\text{O}_7 \cdot 10\text{H}_2\text{O}$) կամ ամոնիումի դիհիդրոֆոսֆատի ($\text{NH}_4\text{H}_2\text{PO}_4 \cdot 4\text{H}_2\text{O}$) հետ առաջացնում են վերոհիշյալ գունավոր ապակիները: Նման վերլուծություն է նաև ալյուրի անգույն բոցի գունավորումը, երբ փորձարկվող նյութի բյուրեղիկը կամ փոշին պլատինե ձեղով պահում են բոցի մեջ: Այս ձևով հնարավոր է որոշել նյութի այն բաղադրամասերը, որոնք անգույն բոցը ներկում են բնորոշ գույնի (նատրիումը՝ վառ դեղին, ստրոնցիումը՝ ալ կարմիր և այլն):

Վերլուծության «թաց» եղանակի դեպքում ռեակցիաները ընթանում են լուծույթներում, հալակապես՝ ջրային²: Քանի որ փորձարկման ենթակա նյութերից շատերը ջրային լուծույթներում դիտացվում են իոնների, ապա որակական վերլուծությունը հիմնականում դառնում է իոնների՝ կատիոնների ու անիոնների որոշման միջոց:

Քիմիական այն ռեակցիաները, որոնց միջոցով որոշվում է նյութի բաղադրության որակական կազմը, կոչվում են վերլուծական: Ոչ բոլոր քիմիական ռեակցիաներն են այդպիսիք: Վերլուծական ռեակցիան ընթանում է այնպիսի արտաքին արդյունքով:

¹ Ֆիզիկական ու ֆիզիկաքիմիական մեթոդների միջոցով հիմնականում որոշվում են նյութի այնպիսի բաղադրամասերը, որոնք փոխկախվածություն մեջ են նյութի բաղադրությունը քառաչափ հատկություններից: Ֆիզիկական ու ֆիզիկաքիմիական կարևորագույն մեթոդներից են սպեկտրային, ջրմատազրական, բևեռազրական, սպեկտրալուսափական, լյումինեսցենտային և այլ վերլուծություններ:

² Կան նյութեր (նաև սեպտիվներ), հատկապես օրգանական բնույթի, որոնք կարող են լուծվել ջրում: Այդ դեպքում օգտագործում են այլ լուծիչներ՝ սպիրտ, բենզոլ, բրոմաֆորմ, թթուներ և այլն:

որը արձանագրվում է անվերապահորեն՝ նստվածքադոշացում, հա-
զի անջատում, լուծույթի պոնտիֆորում կամ գունագրկում և այլն:

Իոնների (կամ միացությունների) որոշման համար օգտա-
գործվող նյութերը կոչվում են ռեակտիվներ: Որակական վերլու-
ծության մեջ կիրառվող բոլոր ռեակտիվները կարելի է բաժանել
3 տեսակի՝ խմբային, ընտրողական և յուրահատուկ:

Խմբային են կոչվում այն ռեակտիվները, որոնք հնարավորու-
թյուն են տալիս որոշակի պայմաններում իոնները բաժանել ա-
ռանձին վերլուծական խմբերի: Այսպես, օրինակ, ամոնիումի
կարբոնատը՝ $(\text{NH}_4)_2\text{CO}_3$, խմբային ռեակտիվ է, որովհետև ո-
րոշակի պայմաններում միացածոնակ նստեցնում է Ca^{2+} , Sr^{2+} ,
 Ba^{2+} կատիոններին իսկ ընդհանուր կարբոնատները ֆլուորիդացնե-
լը այդ ռեակտիվով կատիոն է անջատել այլ մասնավորապես K^+ ,
 Na^+ , NH_4^+ և Mg^{2+} կատիոնների:

Այն ռեակտիվները, որոնք համանման ռեակցիաներ են առա-
ջացնում քիչ թվով խմբերի հետ, կոչվում են ընտրողական: Վեր-
ջիններս փոխադրում են այնքան սահմանափակ թվով ինքնուրույն
իոնների հետ, որ դրանք մասնակցությունը ընթացող պրոցեսները
անվանում են նաև մասնակի ռեակցիաներ: Այս բնույթի ռեակտի-
վի օրինակ կարող է ծառայել կալիումի ֆոսֆորատի ֆոսֆատները (F^-)
 $\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6]$, որը գոյացնում է միացություններ է առաջացնում
 Fe^{2+} և Cu^{2+} իոնների հետ, կամ դիմեթիլդիօքսիմը՝ $(\text{CH}_3\text{CNOH})_2$,
որը նստվածք է առաջացնում Ni^{2+} , Fe^{2+} և Cu^{2+} կատիոնների
հետ:

Վերջապես, այն ռեակտիվները, որոնք կարող են որոշվող
իոնը հայտնաբերել այլ (կողմնակի) իոնների առկայության պայ-
մաններում, կոչվում են յուրահատուկ: Այսպես, օրինակ, օսլան
յուրահատուկ ռեակտիվ է լոզը, լակմուսը՝ H^+ և OH^- իոնները
որոշելու համար:

Մի շարք վերլուծական ռեակցիաներ ընթանում են միայն ո-
րոշակի պայմաններում: Նրանց յուրահատուկ ազդեցությունը կա-
րելի է մեծացնել տարբեր եղանակներով՝ միջավայրի ռեակցիայի
ու ջերմաստիճանի փոփոխման, «խանդարող» իոնները կապելու
(կայուն կոմպլեքսների ձևով), մեկուսացնելու և այլ միջոցներով:

Նյութով փորձարկվող (վերլուծվող) նյութի քանակից, լու-
ծույթի ծավալից և կատարման օժանդակից՝ ապրելում են որա-
կական վերլուծության մակրո-, կիսամիկրո-, միկրո- և սուպրա-
միկրոմեթոդներ:

Մակրոմեթոդի դեպքում փորձարկվող նյութի քանակը կազ-
մում է 0.5—1.0 գ, իսկ լուծույթի ծավալը՝ 10—20 մլ: Ընդ որում,
ստացված նստվածքը անջատում են ֆիլտրելու միջոցով:

Միկրոմեթոդի դեպքում մակրոմեթոդի համեմատությամբ
վերցնում են 100 և ավելի անգամ քիչ վերլուծվող նյութ: Իսկ ուլտ-
րամիկրոմեթոդության համար որոշման ենթակա նյութի քանակը
փոքր է լինում 1 մգ-ից, լուծույթի ծավալը 0.1—0.2 մլ է:

Կիսամիկրոմեթոդի օգտագործում է 0.01—0.1 գ փորձարկ-
վող նյութ: Ստացված նստվածքը այս դեպքում անջատում են
ցենտրիֆուգման միջոցով:

Վերլուծական ռեակցիաները լինում են տարբեր զգայնության:
Վերջինս բնութագրվում է երկու մեծությամբ՝ հայտնաբերվող նը-
վազագույնով և սահմանային նոսրությունը:

Հայտնաբերվող նվազագույնը որոշվող իոնի այն քանակն է
(արտահայտված γ -ներով)՝ սահմանային կոնցենտրացիա ունե-
ցող լուծույթի ամենամեղադրույն ծավալում, որը հնարավոր է
տվյալ ռեակտիվով հայտնաբերել՝ պահպանելով ռեակցիայի բն-
թագի համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Լուծույթի սահմանային կոնցենտրացիան ցույց է տալիս, ին
որովից իոնի մեկ գրամը քանի գրամ լուծիչում գտնվելու դեպ-
քում դեռևս հնարավոր է հայտնաբերել լուծույթի որոշակի ծավա-
լում: Այսպիսով, լուծույթի սահմանային կոնցենտրացիան որոշ-
վում է հայտնաբերվող իոնի մեկ գրամի և լուծիչի կշռի (g) հարա-
բերությամբ՝ 1 : g:

Լուծույթի սահմանային կոնցենտրացիայի հակադարձ մեծու-
թյունը կոչվում է սահմանային նոսրություն: Այսպես, օրինակ,
բլորիդ իոնը արծաթի նիտրատի (AgNO_3) լուծույթով կարելի է
որոշել, եթե 1 գ Cl^- պարունակվի 1060 լ (1000000 դ) ջրում, այս-
ինքն՝ լուծույթի սահմանային կոնցենտրացիան լինի 1 : 1000000,
իսկ սահմանային նոսրությունը՝ 10^6 :

Որակական վերլուծության մեջ կիրառվում են ռեակցիաներ,
որոնց զգայնությունը առաքանվում է այսպիսի սահմաններում:
Հայտնաբերվող նվազագույնը՝ 50-ից մինչև 0.001 մկգ, իսկ սահ-
մանային կոնցենտրացիան՝ 1 : 10000 մինչև 1 : 50000000 (սահ-
մանային նոսրությունը՝ 10^4 -ից մինչև $2 \cdot 10^8$): Ռեակցիան նույն-
րան զգայուն է, որքան փոքր է հայտնաբերվող նվազագույնը, և

$$1 \quad \gamma = 10^{-3} \quad \text{մգ} = 10^{-1} \quad \text{գ} = 1 \quad \text{մկգ (միկրոգրամ)}$$

մեծ՝ սահմանային նոսրությունը: Այդ մեծությունների մաթեմատիկական կապն արտահայտվում է այսպես՝

$$m = \frac{V \cdot 10^6}{G},$$

որտեղ՝ m -ը հալանաբերվող նվազագույնն է,

G -ն՝ սահմանային նոսրությունը,

V -ն՝ լուծույթի այն ծավալը (մլ-ով), որը պետք է

վերցնել ուսկիցիան կատարելու համար:

Վերլուծական ուսկիցիայի լիզայնությունը պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով, որոնք պետք է հաշվի առնել և խստիվ պահպանել: Գրանք են՝ միջավայրի pH-ը, ջերմաստիճանը, օդատեղումը ուսկիցիայի կոնցենտրացիան, կոլմենակի իոնների առկայությունը և այլն:

ԿԱՏԻՈՆՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ըստ ծծմբաջրածնական մեթոդի ընդունված է կատիոնները բաժանել 5 վերլուծական խմբերի (տե՛ս աղ. 1): Կատիոնների դասակարգումը վերլուծական խմբերի կատարվում է ըստ խմբային ռեակտիվների, որոնց օգնությամբ պահպանելով համապատասխան պայմաններ, հնարավոր է լինում նախ իրարից բաժանել խմբերը, այնուհետև խմբերի սահմաններում որոշել ենթախմբերը (եթե կան այդպիսիք) և առանձին կատիոնները: Այդ ամենը կատարվում է խանգարող իոնների (խմբերի) «որոշման ու անջաման», «անջամանի ու որոշման» հաջորդականությունը պահպանելու սկզբունքով:

Խմբերի՝ որոշման ու բաժանման, իսկ խմբում կատիոնների հալանաբերման նախասլես՝ մշակված և որոշակի պլանով իրականացվող ուսկիցիաների շարքը կոչվում է վերլուծության համակարգված ընթացք:

Գոյություն ունի նաև վերլուծության կոտորակային եղանակ, որն իրագործվում է յուրահատուկ ուսկիցիաների օգնությամբ՝ վերծարելով լուծույթի առանձին նմուշներում: Այս մեթոդն օգտագործվում է բացասիկ գեպքերում, երբ անհրաժեշտ է լինում քիչ թվով իոններ որոշել: Որքան հարստանա յուրահատուկ ուսկիցիաների՝ վինանցը, այնքան կրնդլայնվի կոտորակային եղանակի էֆեկտությունը: Երբ համեմատաբար քիչ ջանքեր է պահանջում և իրագործվում է ավելի արագ:

Կատիոնների դասակարգումը

Վերլուծական խմբեր	Կատիոններ ¹	Խեղդային ոնակարգ	Նստվածքներ
I	Na ⁺ , K ⁺ , NH ₄ ⁺ , Mg ²⁺	չունի	—
II	Ca ²⁺ , Ba ²⁺ , Sr ²⁺	(NH ₄) ₂ CO ₃ -ը NH ₄ OH-ի և NH ₄ Cl-ի առկայությամբ	CaCO ₃ BaCO ₃ SrCO ₃
III	Al ³⁺ , Fe ³⁺ , Fe ²⁺ , Zn ²⁺ , Mn ²⁺ , Ni ²⁺ , Co ²⁺ , Cr ³⁺	(NH ₄) ₂ S-ը NH ₄ OH-ի և NH ₄ Cl-ի առկայությամբ	Cr(OH) ₃ , Al(OH) ₃ , Fe ₂ S ₃ , FeS, ZnS, MnS, CoS, NiS
IV	Cu ²⁺ , Bi ³⁺ , Hg ²⁺ , As ³⁺ , As ⁵⁺ , Cd ²⁺	H ₂ S-ը թթվային միջավայրում	CuS, Bi ₂ S ₃ , CdS, HgS, As ₂ S ₃ , As ₂ S ₅
V	Ag ⁺ , Pb ²⁺ , Hg ₂ ²⁺	HCl	AgCl, PbCl ₂ , Hg ₂ Cl ₂

¹ Բնական կատիոնները արվում են ուսումնական ծրագրին համապատասխան:

Գ Լ Ո Ի Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՏԻՈՆՆԵՐԻ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԸ

Ընդհանուր բնութագիրը

Կատիոնների I խմբին են պատկանում Na⁺, K⁺, NH₄⁺ և Mg²⁺ իոնները:

Նրանց աղերի ճնշող մեծամասնությունը լավ լուծելի է ջրում: Մեծանշան կարևոր է նշել, որ նրանց հիդրօքսիդները, սուլֆիդները, կարբոնատներն ու քլորիդները ես լավ են լուծվում ջրում, որով և տարրերվում են կատիոնների մյուս խմբերից: Այդ միացությունների լուծելիության հետևանքով I խմբի կատիոնները չեն նստեցնում մյուս խմբերի խմբային ռեակտիվներով (HCl, H₂S, (NH₄)₂S և (NH₄)₂CO₃), այսինքն՝ մյուս խմբերի կատիոնները միմյանցից բաժանելիս նրանք մնում են լուծույթում: I խումբը խմբային առանձին չունի: Քանի որ մյուս խմբերի կատիոնները խոնգարում են K⁺-ի, Na⁺-ի և Mg²⁺-ի որոշմանը, ապա համակարգված վերլուծության ընթացքում դրանք հայտնաբերում են, երբ մյուս բոլոր կատիոնները փորձարկվող լուծույթից լիովին հեռացված են:


I խմբի կատիոններից յուրահատուկ տեղ է գրավում Mg²⁺-ը, որը պատկանում է պարբերական աղյուսակի II խմբին և միջանկյալ դերը ունի վերլուծական I և II խմբերի կատիոնների միջև: Այն կարելի է վերագրել կատիոնների ինչպես I, այնպես էլ II խմբին: Կատիոնների II խմբի հետ Mg²⁺-ն ունի այն ընդհանուր հատկությունը, որ նրա հիմնային կարբոնատը՝ (MgOH)₂CO₃, քիչ լուծելի է ջրում: Սակայն այն լուծելի է ամոնիումի աղերում, և քանի որ կատիոնների II խումբը նստեցվում է ամոնիումի կարբոնատով՝ NH₄Cl-ի առկայությամբ, ապա Mg²⁺-ը վերլուծության ընթացքում II խմբի հետ չի նստում, այլ մնում է լուծույթում: I խմբի հետ Այդ իսկ պատճառով հարմար է այն ուսումնասիրել I խմբի կատիոնների հետ:

Նշենք նաև, որ I խմբի բոլոր կատիոնները ջրային լուծույթում անզույն են:

Մասնակի ռեակցիաներ



K⁺-ի ռեակցիաները

1. Նատրիումի հիդրոտարտարաթ՝ NaHC₄H₄O₆, կալիումի աղերի լուծույթների հետ առաջացնում է սպիտակ բյուրեղային նստվածք՝



կամ իննակտոն ձևով՝ $\text{K}^+ + \text{HC}_4\text{H}_4\text{O}_6^- = \text{KHC}_4\text{H}_4\text{O}_6 \downarrow$

KHC₄H₄O₆-ի նստվածքը լուծվում է տաք ջրում, ուժեղ թրթուներում և ալկալիներում, բայց չի լուծվում թույլ թթուներում, օրինակ՝ քացախաթթվի մեջ։



Հետևաբար, ռեակցիան ընթանալու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

ա) ռեակցիան կատարել սառը պայմաններում.


բ) միջավայրը լինի չեզոք կամ թույլ թթվային ($\text{pH} = 4-7$),

գ) K⁺-ի կոնցենտրացիան րավականին մեծ լինի։



Ցանկալի pH ստանալու համար հիմնային միջավայր ունեցող լուծույթները չեզոքացնում են քացախաթթվով, իսկ թթվային լուծույթները՝ CH₃COONa-ով (CH₃COONH₄ և CH₃COOK չի կարելի օգտագործել)։

Փորձ։ Փորձանոթի մեջ վերցնել 4—5 կաթիլ կալիումի աղի լուծույթ և ավելացնել նույնքան NaHC₄H₄O₆։ Նստվածքը առաջանում է, երբ փորձանոթի պատերը ներսից շփում են ապակյա ձողիկով՝ միաժամանակ փորձանոթը պահելով հոսող ջրի տակ։

2. Նատրիումի կոբալտինիտրիտը՝ Na₃[Co(NO₂)₆], կալիումի աղերի լուծույթների հետ չեզոք կամ քացախաթթվային միջավայրում առաջացնում է դեղին նստվածք՝





Հիմնային և ուժեղ թթվային միջավայրում ռեակտիվը քայքայվում է՝



Նատրիումի կոբալտինիտրիտը կալիումի կատիոնի հայտնաբերման ամենազգայուն ռեակտիվն է։

Փորձ։ Կալիումի աղի լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել 1 կաթիլ Na₃[Co(NO₂)₆]-ի լուծույթ։ Դիտել դեղին նստվածքի առաջացումը։ Ռեակցիան իրագործվում է չեզոք կամ քացախաթթվային միջավայրում։



K⁺ իոնի հայտնաբերմանը կարող է խանգարել NH₄⁺ կատիոնը քանի որ թե NaHC₄H₄O₆ և թե Na₃[Co(NO₂)₆] ռեակտիվը NH₄⁺ կատիոնի հետ առաջացնում են կալիումական աղերի պես նստվածքներ՝



Ուստի K⁺-ից առաջ անհրաժեշտ է հայտնաբերել NH₄⁺ կատիոնը և հեռացնել լուծույթից։

Na⁺-ի ռեակցիաները

1. Կալիումի դիհիդրոտանտրիմոնատը՝ KH₂SbO₄, նատրիումի աղերի լուծույթների հետ առաջացնում է սպիտակ նստվածք՝




Ռեակցիայի հաջող ընթացքի համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.


ա) նատրիումական աղի կոնցենտրացիան բավականաչափ մեծ լինի։ Այս ռեակցիան փոքր զգայնություն ունի, ուստի նոսր լուծույթները պետք է նախապես խտացնել գոլորշիացնելով։

բ) Ռեակցիան կատարել սառը պայմաններում (փորձանոթը պահելով հոսող ջրի տակ), որովհետև նստվածքը զգալիորեն լուծելի է տաք ջրում։ Շփել ապակյա ձողով։

գ) Ստեղծել չեզոք կամ թույլ հիմնային միջավայր։ Ուժեղ հիմնային միջավայրում նստվածքը մասամբ լուծվում է՝



Իսկ թթվային միջավայրում ռեակտիվը քայքայվում է՝





առաջացնելով սպիտակ նստվածք, որը կարելի է շփոթել նատրիումի հիդրոտանտրիմոնատի հետ։

Թթվային միջավայր ունեցող լուծույթները շեղոքացնում են KOH-ով, իսկ հիմնայինը՝ քաջախաթթվով:

Փորձ: Նատրիումական աղի լուծույթի 2—3 կաթիլին ավելացնել նույնքան KH_2SbO_4 -ի լուծույթ և փորձանոթի պատերը շփել ապակյա ձողիկով (միաժամանակ փորձանոթը պահելով հոսող ջրի տակ):

KH_2SbO_4 ռեակտիվի օգտագործման դեպքում պետք է հիշել, որ NH_4^+ կատիոնի առկայությունը կարող է խանգարել Na^+ -ի հայտնաբերմանը:

Տվյալ ռեակտիվը ամոնիումի աղերի լուծույթներում կարող է առաջացնել HSbO_3 -ի սպիտակ նստվածք որպես արդյունք այն բանի, որ ամոնիումի աղերի լուծույթները հիդրոլիզի հետևանքով առաջացնում են թթվային միջավայր, և KH_2SbO_4 -ը քայքայվում է՝



Այսպիսով, եթե լուծույթում առկա է NH_4^+ կատիոնը, անհրաժեշտ է այն նախապես հեռացնել:

2. Միկրոբյուրեղազննական ռեակցիան ցինկուրանիլացեալատի հետ:

Առարկայական ապակու վրա տեղավորել 1 կաթիլ նատրիումական աղի լուծույթ և ղեղադրել գոլորշիացնել մինչև չորանալը: Սառչելուց հետո չոր մնացորդը մշակել 1 կաթիլ ցինկուրանիլացեալատով՝ $\text{Zn}(\text{UO}_2)_3(\text{CH}_3\text{COO})_6$, և մի քանի բոպե անց մանրադիտակով զննել ստացված նատրիումի ցինկուրանիլացեալատի՝ $\text{NaZn}(\text{UO}_2)_2(\text{CH}_3\text{COO})_6 \cdot 9\text{H}_2\text{O}$ դեղին բյուրեղները:



3. Բոցի գունավորման ռեակցիան:

Նատրիումի ցնդող միացությունները անգույն բոցը ներկում են վառ դեղնագույն, որը պահպանվում է մի քանի վայրկյան:

Փորձ: Նիբրումե մետաղալարը մաքրելու նպատակով նախապես թրջել աղաթթվով և շիկացնել բոցում: Այնուհետև մետաղալարով վերցնել քիչ քանակությամբ չոր նատրիումական աղ և պահել այրիչի բոցի անդույն մասում: Չոր աղի փոխարեն կարելի է վերցնել նատրիումի որևէ աղի լուծույթ:



NH₄⁺-ի ռեակցիաներ

1. Կծու ալկալիները՝ NaOH, KOH, ամոնիումի աղերի լուծույթներից տաքացման պայմաններում դուրս են մղում ամոնիակ՝ NH_3 , որն ունի բնորոշ սուր հոտ՝



Փորձ: Ամոնիումի աղի լուծույթի 1—2 կաթիլին ավելացնել 3—4 կաթիլ ալկալիի լուծույթ և թեթևակի տաքացնել: Անջատվող ամոնիակը կարելի է հայտնաբերել ոչ միայն հոտով, այլև թրջած ֆենոլֆտալեինի թղթով՝ այն մոտեցնելով փորձանոթի բերանին (չի կարելի հպել փորձանոթին կամ ընկղմել նրա մեջ): Ամոնիակի առկայությունից ֆենոլֆտալեինի թուղթը կարմրում է:

2. Նևսլերի ռեակտիվը՝ $\text{K}_2[\text{HgI}_4] + \text{KOH}$, ամոնիումի աղերի հետ առաջացնում է գորշ-կարմրավուն նստվածք՝



Փորձ: Ամոնիումի աղի նոսր լուծույթի 1 կաթիլին ավելացնել 1—2 կաթիլ նևսլերի ռեակտիվի լուծույթ: Վերջինս վերցնել հավելորդով, քանի որ նստվածքը լուծվում է ամոնիումի աղերի ավելացումով: Ամոնիումի աղի շնչին քանակի դեպքում գորշ-կարմրավունի փոխարեն առաջանում է դեղնանարնջագույն նստվածք:

NH₄⁺-ի ճեռացումը

Քանի որ ամոնիումի կատիոնը խանգարում է K^+ -ի և Na^+ -ի (KH_2SbO_4 -ով) հայտնաբերմանը, ապա՝ ա) NH_4^+ -ի առկայությունը լուծույթում պետք է որոշել մինչև K^+ -ի և Na^+ -ի հայտնաբերումը, բ) եթե NH_4^+ -ը հայտնաբերված է, անհրաժեշտ է այն լիովին հեռացնել լուծույթից:

NH_4^+ -ի հեռացման համար օգտվում են այն հատկությունից, որ տաքացնելիս նրա աղերը հեշտությամբ քայքայվում ու ցնդում են:

Լուծույթը, որից պետք է հեռացնել NH_4^+ -ը, գոլորշիացնում են ճենապակյա թասում մինչև չորանալը, իսկ չոր մնացորդը շիկացնում մինչև NH_4^+ -ի լրիվ հեռացումը (ստուգում են նևսլերի ռեակտիվով):

NH_4Cl -ի դեպքում ռեակցիան ընթանում է ըստ այս հավասարման՝




Ռեակցիան, ինչպես երևում է, դարձելի է: Շրկացման միջավայրից հեռանալով՝ անջատված գազերը նորից միանում են իրար՝ առաջացնելով NH_4Cl -ի բյուրեղիկների սպիտակ ծուխ:

Կալիումի ու նատրիումի աղերը շատ ավելի զժվարովյալ մե են ցնդում, քան ամոնիումի չլորիդը նրանք մնում են մնացորդում: Վեղջիկն լուծում են թորած ջրում և ստանում նոր լուծույթ, որը պարունակում է բոլոր կատիոնները, բացի NH_4^+ -ից:

Mg^{2+} -ի ռեակցիաները

1. Ալկալիները՝ NaOH , KOH և NH_4OH , Mg^{2+} -ի հետ առաջացնում են սպիտակ նստվածք՝





Նստվածքը լուծելի է թթուներում և ամոնիումի աղերում (համոզվեք փորձով): Հետևաբար NH_4^+ -ի առկայության դեպքում $\text{Mg}(\text{OH})_2$ -ի նստեցումը լրիվ չէ: Իսկ եթե ալկալու հետ միաժամանակ ավելացվում է NH_4Cl , ապա $\text{Mg}(\text{OH})_2$ -ը ընդհանրապես չի նստում:

Փորձ: ա) Մազնեղիումի աղի լուծույթի 2 կաթիլին ավելացնել նախքան NaOH -ի 2 ն լուծույթ: Դիտել նստվածքի առաջացումը: Եույն աղի լուծույթի 2 կաթիլին ավելացնել նույնքան 2 ն ամոնիակի լուծույթ: Առաջանում է նույնանման նստվածք:

գ) Մազնեղիումի աղի լուծույթի 2 կաթիլին ավելացնել NH_4Cl -ի 2—3 կաթիլ, ապա՝ 2 կաթիլ 2 ն ամոնիակի լուծույթ: Նստվածք չի առաջանում:

2. Նատրիումի հիդրոֆոսֆատը՝ Na_2HPO_4 , NH_4OH -ի և NH_4Cl -ի առկայությամբ մազնեղիումի աղերի հետ առաջացնում է մազնեղիում-ամոնիում ֆոսֆատի սպիտակ բյուրեղային նստվածք՝




NH_4Cl ավելացվում է, որպեսզի $\text{Mg}(\text{OH})_2$ -ի նստվածք չառաջանա:


Փորձ: Վերցնել մազնեղիումի աղի լուծույթի 5—6 կաթիլ, ավելացնել 2—3 կաթիլ 2 ն HCl և 5—6 կաթիլ Na_2HPO_4 -ի լուծույթ: Այնուհետև այդ խառնուրդին կաթիլ առ կաթիլ ավելացնել 2 ն NH_4OH մինչև թույլ հիմնային միջավայրի առաջացումը (լու-

ծույթից ամոնիակի հոտ է գալիս): Ստացվում է MgNH_4PO_4 -ի բնորոշ բյուրեղային նստվածքը:


3. Լուծելի կարբոնատները (Na_2CO_3 , K_2CO_3) Mg^{2+} -ի հետ առաջացնում են սպիտակ ամորֆ նստվածք՝



կամ՝



Նստվածքը լուծվում է թթուներում և ամոնիումի աղերում, ուստի եթե Na_2CO_3 -ի փոխարեն որպես ռեակտիվ օգտագործվի $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ը, ապա Mg^{2+} -ի նստեցումը լրիվ չի լինի՝ հետևյալ ռեակցիայի պատճառով.



Ամոնիումի աղի կոնցենտրացիան բարձրացնելու դեպքում (փորձարկվող լուծույթին NH_4Cl ավելացնելու միջոցով) $(\text{MgOH})_2\text{CO}_3$ -ի նստվածք ընդհանրապես չի առաջանում:

ԵՐԿՐՈՐԻ ԽՄԲԻ ԿԱՏԻՈՆՆԵՐԻ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԸ



ԸՆԴՈՒՆՈՒ ԲԵՈՒՔԱԳԻՐ

Երկրորդ վերլուծական խմբին պատկանում են Ca^{2+} , Sr^{2+} և Ba^{2+} կատիոնները: Սրանց աղերի զգալի մասն անդուլն է ու ջրում քիչ լուծելի: Սուլֆիդները սակայն, ինչպես և I խմբիներ, ի տարբերություն III—V խմբերի, ջրում լավ են լուծվում: Բնական II խմբի կատիոններն առաջացնում են անլուծելի (մասամբ՝ քիչ լուծելի) շատ աղեր՝ սուլֆատներ, ֆոսֆատներ, օքսալատներ ու կարբոնատներ, այնուամենայնիվ դրանք առաջին խմբի կատիոններից անջատելու համար առավել նպատակահարմար է նստեցնել կարբոնատների ձևով: Դա բացատրվում է նրանով, որ կալցիումի, ստրոնցիումի և բարիումի կարբոնատները նախ՝ գործնականորեն անլուծելի են ջրում, հետևաբար հետազոտվող կատիոնները նստեցվում են լրիվ: այնուհետև՝ հեշտությամբ լուծվում են աղաթթվի, ալոտական թթվի և քացախաթթվի մեջ, և, վերջապես, կարբոնատ իւնի (ռեակտիվի) ավելցուկը չի խանգարում վերլուծության հետագա ընթացքին՝ I խմբի կատիոնների հայտնաբերմանը, քանի որ կարելի է այն թթուներով քայքայել ու հեռացնել:

Նշանակում է՝ II վերլուծական խմբի կատիոնների համար լավագույն խմբային սեակտիվ կարող է համարվել կարբոնատ իոնը՝ CO_3^{2-} : Միանգամայն հասկանալի է, որ կարբոնատ իոնը պետք է վերցնել լուծելի աղի՝ Na_2CO_3 -ի, K_2CO_3 -ի, $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի ձևով: Դրանցից յուրաքանչյուրը լրիվ բավարարում է խմբային սեակտիվին ներկայացվող բոլոր պահանջներին: Բայց քանի որ քննարկվող խմբի խմբային սեակտիվն օգտագործվում է կատիոնների II խումբը I-ից անջատելու համար, վերոհիշյալ սեակտիվներից ցանկացածը վերցնելու դեպքում լուծույթի մեջ մտցվում է I խմբի կատիոն՝ K^+ , Na^+ կամ NH_4^+ :

Հաշվի առնելով, որ NH_4^+ կատիոնը առանձին նմուշում նախապես կարելի է հայտնաբերել (զրան չի խանգարում ոչ մի այլ կատիոն), իսկ հարկ եղած դեպքում՝ նաև լուծույթից լրիվ հեռացնել, ջրում լուծելի կարբոնատներից որպես խմբային սեակտիվ օգտագործվում է $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ը: Սակայն վերջինս որպես սեակտիվ ունի թերություններ, որոնց իմացությունն անհրաժեշտ է վերլուծությունն անսխալ կատարելու համար:

1. $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ը, որպես թույլ հիմքից ու թույլ թթվից գոյացած աղ, ջրում ենթարկվում է ուժեղ հիդրոլիզի՝




առաջացնելով HCO_3^- անիոնը, որը II խմբի կատիոնների հետ տալիս է ջրում լուծելի հիդրոկարբոնատներ, հետևապես այդ կատիոնների նստեցումը նման պայմաններում լրիվ լինել չի կարող: Հիդրոլիզը կանխելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ ալկալացնել NH_4OH -ի լուծույթ:

2. NH_4OH -ի ավելացումը, սակայն, բարձրացնում է լուծույթի հիմնայնությունը՝ pH -ը, որի հետևանքով Mg^{2+} կատիոնը կարող է մասամբ նստվածք անցնել $\text{Mg}(\text{OH})_2$ -ի ձևով:

Այս երևույթը կարելի է կանխել վերլուծվող լուծույթին նախապես NH_4Cl ավելացնելու միջոցով, որը միաժամանակ NH_4OH -ի հետ առաջացնում է բուֆերային խառնուրդ ու կարգավորում միջալայրի pH -ը:

3. Ամոնիումի կարբոնատի լուծույթը կարող է պարունակել կատիոնների նստեցմանը խանգարող մի խառնուրդ է: Դա ամոնիումի կարբամիդատն է՝ $\text{NH}_2\text{COONH}_4$, որը գոյանում է ամոնիումի կարբոնատի քայքայումից՝



Կարբամիդատի առաջացման հետևանքով II խմբի կատիոնների նստեցումը կարող է լրիվ չլինել, որովհետև նախ՝ դրանց կարբամիդատները լուծելի են, երկրորդ՝ կարբամիդատի գոյացումը ղդալի չափով նվազեցնում է CO_3^{2-} իոնի կոնցենտրացիան:

Այս «արգելքը» ևս կարելի է հեշտությամբ հաղթահարել՝ II խմբի կատիոնների նստեցումը իրագործելով մինչև 80°C (բայց ոչ ավել) տաքացրած լուծույթում: Լուծույթի տաքացման հետևանքով վերը բերված հավասարակշռությունը տեղաշարժվում է ամոնիումի կարբոնատի առաջացման ուղղությամբ:

Այսպիսով, $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ խմբային սեակտիվի միջոցով II խմբի կատիոնների նստեցումը անհրաժեշտ է իրագործել՝ պահպանելով հետևյալ պայմանները.

ա) Փորձարկվող լուծույթին նախապես ավելացնել NH_4OH մինչև մոմինակի հոտի զգացումը, այնուհետև՝ նաև NH_4Cl :

բ) NH_4OH -ի և NH_4Cl -ի ավելացումը կատարել այն հաշվով, որ լուծույթի միջավայրն ունենա $\text{pH} \approx 9,2$ արժեքը:



գ) Ստացված խառնուրդը, այնուհետև, տաքացնել $70-80^\circ\text{C}$ -ում և ավելացնել խմբային սևակաթիլը (կատիոնները նստում են կարբոնատների ձևով):

Ստացված կարբոնատները հեշտությամբ լուծվում են HCl , HNO_3 և CH_3COOH թթուների մեջ:

Մասնակի ռեակցիաներ


Ba^{2+} -ի ռեակցիաները

1. Բարիումի լուծելի աղերը, փոխադրելով $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի և ածխաթթվի լուծելի ալ աղերի հետ, առաջացնում են BaCO_3 սպիտակ նստվածք՝



Փորձ: Բարիումի քլորիդի 5—6 կաթիլ լուծույթին ավելացնել $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի լուծույթի 6—7 կաթիլ և թույլ տաքացնել: Դիտել նստվածքի գոյացումը: Ստացված նստվածքը լուծվում է աղաթթվի, ազոտական թթվի և քացախաթթվի մեջ: Համոզվելու համար նստվածքին կաթիլներով ավելացնել քացախաթթու: Դրել ռեակցիայի հավասարումը:





2. Բարիումի լուծելի աղերը, փոխադրելով նախ ծծմբական թթվի կամ նրա լուծելի աղերի հետ, առաջացնում են BaSO_4 -ի սպիտակ բյուրեղային նստվածք, որն անլուծելի է թթուների և հիմքերի նոսր լուծույթներում:



Փորձ: Վերցնել 5—6 կաթիլ փորձարկվող լուծույթ և ավելացնել նույնքան ծծմբական թթվի կամ $(\text{NH}_4)_2\text{SO}_4$ -ի նոսր լուծույթ: Դիտել նստվածքի առաջացումը:

Բարիումի սուլֆատը՝ BaSO_4 , անլուծելի է թթուներում: Ստուգելու համար ստացված նստվածքը բաժանել երեք մասի (փորձանոթներում) և յուրաքանչյուրին ավելացնել համապատասխանաբար HCl , HNO_3 , CH_3COOH :

3. Բարիումի կատիոնի հետ լուծելի քրոմատները (CrO_4^{2-}) և դիքրոմատները ($\text{Cr}_2\text{O}_7^{2-}$) առաջացնում են դեղին բյուրեղային նստվածք (BaCrO_4)՝





Երկրորդ ռեակցիայում հավասարակշռությունը լրիվ դեղի աջ տեղաշարժելու համար անհրաժեշտ է $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի հետ ավելացնել նաև նատրիումիացիտատ՝ CH_3COONa , ուժեղ թթվի գոյացումը կանխելու նպատակով:

Փորձ: 5—6 կաթիլ բարիումի քլորիդի լուծույթին ավելացնել նույնքան K_2CrO_4 -ի (կամ $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի ու CH_3COONa -ի) լուծույթներ: Դիտել նստվածքը:

BaCrO_4 -ի նստվածքը աղաթթվի և ազոտական թթվի մեջ լուծվում է, քացախաթթվում՝ ոչ: Դրանում համոզվելու համար կատարել համապատասխան փորձեր և գրել ռեակցիաների հավասարումները:

4. Նատրիումի հիդրոֆոսֆատի (Na_2HPO_4) հետ բարիումի կատիոնը շեղոք միջավայրում տալիս է BaHPO_4 -ի սպիտակ անօրֆ նստվածք՝



Իսկ հիմնային միջավայրում՝ $\text{Ba}_3(\text{PO}_4)_2$:



Փորձ: Բարիումի փորձարկվող աղի 5—6 կաթիլ լուծույթին ավելացնել նույնքան Na_2HPO_4 -ի լուծույթ: Դիտել նստվածքի առաջացումը:

BaHPO_4 -ի նստվածքը լուծվում է հանքային թթուներում և քացախաթթվի մեջ: Փորձել և գրել ռեակցիաների հավասարումները:

5. Բարիումի ցնդող աղերը, օրինակ՝ BaCl_2 , $\text{Ba}(\text{NO}_3)_2$ և այլն, ալիքի անգույն բոցը գունավորում են կանաչադեղնավուն:

Ca²⁺-ի ռեակցիաները


1. Կալցիումի կատիոնը ամոնիումի և ալյումինի կարբոնատներին հետ առաջացնում է սպիտակ նստվածք՝



Փորձ: CaCl₂-ի լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան (NH₄)₂CO₃-ի լուծույթ և թույլ տաքացնել: Դիտել CaCO₃-ի նստվածքի առաջացումը:

Ստացված նստվածքը լուծելի է հանքային թթուներում և քաղաքաթթվի մեջ: Փորձել և գրել ռեակցիաների հավասարումները:



2. Կալցիումի կատիոնը ամոնիումի օքսալատի [(NH₄)₂C₂O₄] հետ առաջացնում է կալցիումի օքսալատի սպիտակ մանրաբյուրեղ նստվածք՝



Այս ռեակցիայով կալցիումի հայտնաբերմանը խանգարում է Ba²⁺ կատիոնը, որը C₂O₄²⁻-ի հետ առաջացնում է նույնանման նստվածք:

Փորձ: CaCl₂-ի 5—6 կաթիլ լուծույթին ավելացնել նույնքան ամոնիումի օքսալատի լուծույթ: Դիտել նստվածքի առաջացումը: Նստվածքը չի լուծվում քաղաքաթթվի մեջ, բայց հեշտաթլումը լուծվում է հանքային թթուներում: Փորձել և գրել ռեակցիաների հավասարումները:

3. Նատրիումի հիդրոֆոսֆատի (Na₂HPO₄) ռեակտիվը կալցիումի լուծելի աղերի հետ առաջացնում է կալցիումի հիդրոֆոսֆատի (CaHPO₄) սպիտակ նստվածք՝



Փորձ: Փորձարկվող լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան Na₂HPO₄-ի լուծույթ: Դիտել նստվածքի առաջացումը: CaHPO₄-ի նստվածքը լուծվում է հանքային թթուներում և քաղաքաթթվի մեջ: Փորձել և գրել ռեակցիաների հավասարումները:



4. Մծմբական թթուն կալցիումի իոնները նստեցնում է միայն խիտ լուծույթները՝ առաջացնելով CaSO₄·2H₂O-ի սպիտակ բյուրեղային նստվածք: Սա ամենազգայուն միկրոբյուրեղազննակուն ռեակցիան է, քանի որ CaSO₄·2H₂O-ն գոյանում է ասեղանման մեծ գլուրեղների ձևով, որոնք տարբերվում են BaSO₄ ի մանրահատիկներից: Դրա շնորհիվ այս ռեակցիայով կալցիումը կարելի է հայտնաբերել բարիումի առկայությամբ:

Փորձ: Առարկայական աղաղակ վրա տեղադրել կալցիումի փորձարկվող լուծույթի 1 կաթիլ և ավելացնել նույնքան 2 ն H₂SO₄-ի լուծույթ: Խառնուրդը պարզիացնել: Մանրադիտակով զննել CaSO₄·2H₂O-ի ասեղանման բյուրեղները:



5. Կալցիումի ցնդող աղերը՝ CaCl₂, Ca(NO₃)₂, ալյուրի ևն՝ գույն բոցը ներկում են աղյուսակարմիր գույնի:

Sr²⁺-ի ռեակցիաները

1. Sr²⁺ կատիոնը լուծելի կարբոնատների, մասնավորապես (NH₄)₂CO₃-ի հետ առաջացնում է սպիտակ ամորֆ նրստվածք, որն աստիճանաբար բյուրեղանում է: Տաքացնելիս պրոցեսն արագանում է:




Նստվածքը լուծվում է նոսր թթուներում (HCl, HNO₃, CH₃COOH):




Փորձ: SrCl₂-ի լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան (NH₄)₂CO₃-ի լուծույթ և թույլ տաքացնել: Դիտել նստվածքի առաջացումը: Նստվածքը լուծել քաղաքաթթվի մեջ:

2. Մծմբական թթուն և նրա լուծելի աղերը Sr²⁺ կատիոնի հետ առաջացնում են սպիտակ բյուրեղային նստվածք՝ SrSO₄:



Քիչ լուծելի SrSO_4 -ի նստվածքը լուծելի կարբոնատով (Na_2CO_3) մշակելիս կարելի է հեշտությամբ փոխարկել դժվարալուծ ստրոնցիումի կարբոնատի՝ SrCO_3 ($l\text{SrSO}_4 = 3.2 \cdot 10^{-7}$, $l\text{SrCO}_3 = 1.1 \cdot 10^{-10}$),

3. Գիպսաջուրը կամ դիպսի ($\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$) հալեցած լուծույթը Sr^{2+} կատիոնի հետ առաջացնում է նստվածք (պղտորություն)։






Տաքացնելիս ռեակցիան արագանում է։

Բարիումի կատիոնի լուծելի տղերը դիպսաջուրի հետ նույնպես առաջացնում են պղտորություն, այդ պատճառով էլ նախքան նըշված ռեակտիվով Sr^{2+} -ի հայտնաբերումը անհրաժեշտ է Ba^{2+} կատիոնը հեռացնել։


Փորձ։ SrCl_2 -ի լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան գիպսաջուր։ Տաքացնել ջրային բաղնիքի վրա։ Որոշ ժամանակից հետո դիտել սղտորության առաջացումը։

4. Նատրիումի հիդրոֆոսֆատը ստրոնցիումի իոնների հետ առաջացնում է սպիտակ նստվածք, որը լուծվում է սղաթթվի, ազոտական թթվի և քացախաթթվի մեջ։





Փորձ։ SrCl_2 -ի լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան նատրիումի հիդրոֆոսֆատի (Na_2HPO_4) լուծույթ։ Դիտել սպիտակ նստվածքի գոյացումը։

5. Ամոնիումի օքսալատը ($(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$, ստրոնցիումի իոնների հետ առաջացնում է SrC_2O_4 -ի սպիտակ մանրաբյուրեղ նստվածք։ Տաքացրած լուծույթից անջատվում են խոշոր բյուրեղներ։




Ստրոնցիումի օքսալատը լուծվում է հանքային թթուների (HCl , HNO_3) և խիտ քացախաթթվի մեջ։



Փորձ։ SrCl_2 -ի լուծույթի 4—5 կաթիլին ավելացնել նույնքան ամոնիումի օքսալատ՝ $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$ ։ Առաջանում է սպիտակ նստվածք։ Ցենտրիֆուգել, նստվածքը անջատել լուծույթից և լուծել սղաթթվի մեջ։

6. Միկրոբյուրեղազնական ռեակցիա

Առարկայական ապակու վրա Sr^{2+} -ի աղի լուծույթի մի կաթիլ մշակում են պղնձի նիտրատի ($w = 2\%$), քացախաթթվի ($C = 0.05$ մոլ/լ) լուծույթներով և բյուրեղային կալիումի նիտրիտով։ Առաջանում են եռակի նիտրիտի $\text{K}_2\text{Sr}[\text{Cu}(\text{NO}_2)_6]$ կապտականաչավուն խորանարդաձև մանր բյուրեղներ։



Փորձ։ Առարկայական ապակու վրա տեղավորում են 1—2 կաթիլ ստրոնցիումի նիտրատի լուծույթ և գոլորշիացնում մինչև չորանալը։ Այնուհետև ավելացնում են նույնքան պղնձի նիտրատի լուծույթ և նորից գոլորշիացնում։ Ստեղծելուց հետո չոր մնացորդը մշակում են 2 կաթիլ քացախաթթվով և ստացված լուծույթի մեջ մտցնում կալիումի նիտրիտի մի քանի բյուրեղներ։ 3—5 րոպե անց մանրադիտակով զննում են ստացված $\text{K}_2\text{Sr}[\text{Cu}(\text{NO}_2)_6]$ -ի մանր բյուրեղները։

7. Բոցի գունավորման ռեակցիա

Ստրոնցիումի ցնդող աղերը անդույն բոցը գունավորում են աղյուսակաժրավուն։

Փորձ։ Նիթրոմեմե տաղալարով վերցնում են քիչ քանակությամբ չոր ստրոնցիումի աղ և պահում այրիլի բոցի անդույն մասում։ Չոր աղի փոխարեն կարելի է վերցնել ստրոնցիումի որևէ աղի լուծույթ։ Դիտել բոցի գունավորումը։

ԿԱՏՈՒՆՆԵՐԻ II ԵՎ I ԽՐԵՐԻ ԽԱՌՆՈՒՐԿԻ

ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ

Վերլուծությունը սկսում են փորձալուծույթի առանձին նըմուշների նախնական փորձարկումներով:

Որոշում են լուծույթի pH-ը ունիվերսալ ինդիկատորի միջոցով:

Քանի որ NH_4^+ կատիոնը վերլուծության ընթացքում լուծույթ է մտցվում II խմբի խմբային ռեակտիվի հետ, ապա անհրաժեշտ է այդ կատիոնը հայտնաբերել նախապես՝ լուծույթի առանձին նըմուշում:

Այդ փորձարկումներից հետո կատիոնների II խումբը բաժանում են I-ից և վերլուծում առանձին-առանձին:

1. NH_4^+ -ի հայտնաբերումը

Փորձալուծույթի 1—2 կաթիլին ավելացնել 2—3 կաթիլ 2 Ն NaOH և տաքացնել ջրային բաղնիքի վրա: Փորձանոթի բերանին մոտեցնել (ներս չմտցնել) թրջած ֆենոլֆտալեինի թուղթ՝ եթե վերջինս կարմրում է, ուրեմն լուծույթում առկա է NH_4^+ :

Այս փորձարկմանը զուգահեռ, ստուգման համար կարելի է 1 կաթիլ փորձարկվող լուծույթին ավելացնել 2—3 կաթիլ նեոպրի ռեակտիվ. գորշ-կարմրավուն նստվածքի առաջացումը հաստատում է NH_4^+ -ի առկայությունը:

2. Կատիոնների II խմբի բաժանումը I խմբից

Փորձալուծույթի 25 կաթիլին ավելացնել մի քանի կաթիլ 2 Ն NH_4OH ու NH_4Cl և որոշել լուծույթի pH-ը: Եթե $\text{pH} < 9$, լուծույթի ավելացնել NH_4OH , իսկ եթե $\text{pH} > 9$, ապա՝ NH_4Cl կամ HCl մինչև $\text{pH} \approx 9$: Այդպիսի միջավայր ստեղծելուց հետո լուծույթը տաքացնել ջրային բաղնիքի վրա և ավելացնել 10—12 կաթիլ $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի լուծույթ: Փորձանոթի պարունակությունը խառնել և,

1 Նկարագրված փորձարկումների ժամանակ կարող է առաջանալ սպիտակ նստվածք, եթե լուծույթում առկա է Mg^{2+} , ապա կգոյանա $\text{Mg}(\text{OH})_2$: Բացի դրանից, ալկալիների լուծույթները սովորաբար պարունակում են Na_2CO_3 -ի կամ K_2CO_3 -ի խառնուրդներ (օդից CO_2 կլանելու հետևանքով), որոնց շնորհիվ կարող են առաջանալ II խմբի կատիոնների կարբոնատների նստվածքներ: Վերջիններս առկայի NH_4^+ -ի հայտնաբերմանը չեն խանգարում:

—2 ըրպե տաքացնելով բաղնիքի վրա, նստվածքը ցենտրիֆուգել, Առանց նստվածքը ցենտրիֆուգատից բաժանելու, ստուգել II խմբի նստեցման լրիվությունը՝ ավելացնելով 1 կաթիլ $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի լուծույթ: Եթե նստվածքի վրայի լուծույթը պղտորվում է, ուրեմն նստեցումը լրիվ չէ: Այդ դեպքում լրացուցիչ պետք է ավելացնել $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ և կրկենել վերահիշյալ բոլոր փորձարկումները:

Հասնելով կատիոնների II խմբի լրիվ նստեցմանը՝ նստվածքը բաժանել լուծույթից և լվանալ տաք ջրով:

Նստվածքը, որը կարող է պարունակել CaCO_3 , BaCO_3 , SrCO_3 վերլուծել ըստ 3—7 կետերի: Իսկ ցենտրիֆուգատը, որը պարունակում է I խմբի կատիոններ, փորձարկել ըստ 8—11 կետերի:

3. Կատիոնների II խմբի կարբոնատների լուծումը

Նախորդ կետում ստացված նստվածքը լուծել 2 Ն CH_3COOH -ի 8—10 կաթիլում: Եթե լուծույթը թևթևակի պղտոր է ստացվում, ապա ցենտրիֆուգել և նստվածքը դեն գցել: Պարզ ցենտրիֆուգատը տեղափոխել նոր փորձանոթ և հետազոտել ստորև նկարագրված ձևով:

4. Ba^{2+} -ի հայտնաբերումը և հեռացումը

Նախորդ կետում ստացված լուծույթի նմուշին ավելացնել K_2CrO_4 -ի 1—2 կաթիլ: Եթե առաջանում է BaCrO_4 -ի դեղին նըստվածք, ապա առկա է Ba^{2+} :

Քանի որ Ba^{2+} -ը խանգարում է Ca^{2+} -ի հայտնաբերմանը, ապա անհրաժեշտ է այն նախապես հեռացնել լուծույթից: Դրա համար լուծույթին լրացուցիչ ավելացնել K_2CrO_4 և տաքացնել:

BaCrO_4 -ի նստվածքը ցենտրիֆուգել, ստուգել նստեցման լրիվությունը և համոզվելով, որ Ba^{2+} -ի նստեցումը լրիվ է, նստվածքը բաժանել ցենտրիֆուգատից ու դեն գցել: Իսկ ցենտրիֆուգատում հայտնաբերել Ca^{2+} և Sr^{2+} կատիոնները:

5. Sr^{2+} -ի և Ca^{2+} -ի նստեցումը

Նախ պետք է ազատվել ցենտրիֆուգատում (4-րդ կետում ստացված) գտնվող K_2CrO_4 -ի ավելցուկից, որը իր վառ գունավո-

բումով խանգարում է վերլուծության հետագա բնագիտական: Լուծույթի մինչև հիմնային ռեակցիան ($\text{pH} < 10$), ալկալացնել պինդ Na_2CO_3 տաքացնել ջրային բաղնիքի վրա 2—3 բոպե, որից հետո նստվաքը (SrCO_3 , CaCO_3) ցենտրիֆուգելով անջատել, լվանալ և շարոնակել հետազոտել նստվածքը:

6. Sr^{2+} -ի հայտնաբերումը և նստեցումը

SrCO_3 -ի և CaCO_3 -ի նստվածքը լուծել 7—8 կաթիլ 2 CH_3COOH -ում. եթե ստացված լուծույթը պղտոր է, այն ցնեսրիֆուգել: Ստացված ցենտրիֆուգատի 2—3 կաթիլին ալկալացն. զրպաջուր և տաքացնել ջրային բաղնիքի վրա: Որոշ ժամանակից հետո առաջանում է պղտորություն, որը վկայում է Sr^{2+} -առկայությունը (եթե պլստորությունը առաջանում է անմիջապեզրպաջուր ալկալացնելիս, նշանակում է՝ Ba^{2+} -ը լրիվ չի հեռացվել և հնարավոր չէ որոշել ստրոնցիումը):

Եթե լուծույթում առկա է Sr^{2+} , անհրաժեշտ է հեռացնել, բայի որ այն խանգարում է Ca^{2+} -ի հայտնաբերմանը: Հեռացնելու համար ցենտրիֆուգատին (6-րդ կետում ստացված) ալկալացնել 8—10 կաթիլ ամոնիումի սուլֆատի լուծույթ, մի քանի կաթիլ ամոնիումի հիդրօքսիդ և տաքացնել 10 բոպե: Այս պայմաններու ստրոնցիումի իոնը նստում է աուլֆատի ձևով, իսկ կալցիում, մնում է լուծույթում: Դա րացատրվում է նրանց լուծելիության արտադրյալների թվային արժեքների տարբերությամբ (ԼԱ SrSO_4 և ԼԱ CaSO_4): Լուծույթը ցենտրիֆուգել, SrSO_4 -ի նստվածքը հեռացնել, ցենտրիֆուգատում հայտնաբերել Ca^{2+} իոնը:

7. Ca^{2+} -ի հայտնաբերումը

Ստացված ցենտրիֆուգատին ալկալացնել 4—5 կաթիլ $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$ -ի լուծույթ և տաքացնել: Եթե առաջանում է նստվածք CaC_2O_4 , ապա հայտնաբերված է Ca^{2+} կատիոնը:

Եթե հետազոտվող լուծույթում բացակայում է Sr^{2+} իոնը, ապա Ca^{2+} -ը հայտնաբերելիս վերլուծության 5, 6 կետերը չեն կատարում:

Այժմ անցնենք հրկրորդ կետում ստացված ցենտրիֆուգատի վերլուծությանը, որը պարունակում է կատիոնների I խումբը և ամոնիումի միացությունների ալկալցուկ (մտքվել են II խումբը նստեցնելիս): Այդ ցենտրիֆուգատում պետք է հայտնաբերել I խմբի կատիոնները: NH_4^+ կատիոնը, որ որոշվել է նախնական փորձարկումով (տե՛ս 1 կետ), չի խանգարում Mg^{2+} -ի հայտնաբերմանը, ուստի վերջինս կարելի է որոշել միանգամից՝ ցենտրիֆուգատի առանձին նմուշում: Մինչ Na^+ -ի և K^+ -ի հայտնաբերումը անհրաժեշտ է նախապես հեռացնել խանգարող NH_4^+ -ը, անկախ նրանից՝ սկզբնական հետազոտվող լուծույթը պարունակել է ամոնիումի կատիոն, թե ոչ, քանի որ ինչպես ասվել է, վերլուծության բնագիտում II խումբը նստեցնելիս NH_4^+ մենք ենք մտացնում հետազոտվող լուծույթի մեջ:

8. Mg^{2+} -ի հայտնաբերումը

Երկրորդ կետում ստացված ցենտրիֆուգատի 2—3 կաթիլին ալկալացնել 2 ն HCl լուծույթ (մինչև թթվային ռեակցիան), 1—2 կաթիլ Na_2HPO_4 և կաթիլ առ կաթիլ՝ NH_4OH , մինչև հիմնային ռեակցիան (լուծույթից պետք է ղգացվի ամոնիակի հոտ): Եթե նստվածք միանգամից չի առաջանում, լուծույթը պահել որոշ ժամանակ:

Սպիտակ բյուրեղային նստվածքի (MgNH_4PO_4) առաջացումը վկայում է, որ լուծույթում առկա է Mg^{2+} կատիոն:

9. NH_4^+ -ի հեռացումը

Ցենտրիֆուգատը տեղափոխել տիգելի (հալքանոթի) կամ ճենպուկյա փոքրիկ թասի մեջ, թթվեցնել խիտ HCl -ով կամ HNO_3 -ով և հեռացնել մինչև չոր մնացորդ ստանալը: Վերջինս շիկացնել մինչև ամոնիումի աղերի լրիվ հեռացումը: Դրանում համողվելու համար չոր մնացորդի փոքրիկ բյուրեղիկը լուծել 2—3 կաթիլ թորած ջրում և ալկալացնել 2—3 կաթիլ նեալերի ռեակտիվ, նարնջագույն նստվածքի առաջացումը կամ լուծույթի դեղին գունավորվելը ցույց է տալիս, որ NH_4^+ -ը լրիվ չի հեռացված: Այդ դեպքում չոր մնացորդը նորից պետք է մշակել խիտ HCl -ով կամ HNO_3 -ով, գո-

լորշիացնել և շիկացնել: Այս գործողությունները կրկնել անքան մինչև NH_4^+ -ը լրիվ հեռացվի: Դրանից հետո ընդ մնացորդը լուծել թորած ջրում: Եթե լուծույթը պղտոր է ստացվում (MgOHCl), ապա ցենտրիֆուգել և պարզ ցենտրիֆուգատը փորձարկել, ինչպես նկարագրված է հաջորդ կետերում:

10. K^+ -ի հայտնաբերումը

NH_4^+ -ից մաքրված լուծույթի 1—2 կաթիլին ավելացնել 2—3 կաթիլ $\text{Na}_2[\text{Co}(\text{NO}_2)_6]$ և, եթե միջավայրի ռեակցիան թթվային է, նաև 1—2 կաթիլ CH_3COONa : Դեղին նստվածք ($\text{K}_2\text{Na}[\text{Co}(\text{NO}_2)_6]$) առաջացումը վկայում է կալիում կատիոնի առկայության մասին:

Վերահիշյալ ռեակտիվի փոխարեն կարելի է օգտագործել $\text{NaHC}_4\text{H}_4\text{O}_6$ բայց այս ռեակցիան նվազ ղգայնություն ունի:

11. Na^+ -ի հայտնաբերումը

Na^+ -ը հայտնաբերում են KH_2SbO_4 -ի միջոցով: Այդ ռեակցիայի կատարման համար անհրաժեշտ պայմանները արդեն նըշված են (տես էջ 14):

Ռեակցիային խանգարում են NH_4^+ և Mg^{2+} կատիոնները: Առաջինը արդեն հեռացված է (կետ 9), հետևաբար որպես «խանգարիչ» իրեն մնում է Mg^{2+} -ը: Փորձարկվող լուծույթում նրա առկայությունը կամ բացակայությունը թելադրում է, թե ինչպես պետք է հայտնաբերել Na^+ կատիոնը:

ա) Mg^{2+} -ը բացակայում է

NH_4^+ -ից ազատված լուծույթի նմուշին ավելացնել նույնքան KH_2SbO_4 և փորձանոթի պատերը շփել սպակվա ձողիկով: Եթե առաջանում է նստվածք, նույնիսկ թեթև պղտորության ձևով, նըշանակում է՝ առկա է Na^+ :

բ) Mg^{2+} -ը առկա է

Նախապես անհրաժեշտ է այն հեռացնել: Դրա համար NH_4^+ -ից ազատված լուծույթին (K^+ -ն որոշելուց հետո) ավելացնել KOH (բայց ոչ NaOH) մինչև ուժեղ հիմնային ռեակցիան: Առաջացած $\text{Mg}(\text{OH})_2$ -ը ցենտրիֆուգել և դեն նետել:

Ցենտրիֆուգատը, որ պարունակում է Na^+ , KOH -ի ավելցուկի հետ, անհրաժեշտ է շեղոքացնել և խտացնել: Դրա համար ցենտրիֆուգատին ավելացնել 2 ն HCl մինչև թթվային ռեակցիան, տեղափոխել տիգելի մեջ, գոլորշիացնել և թեթևակի շիկացնել, որպեսզի HCl -ի ավելցուկը հեռանա: Սառչելուց հետո տիգելի պարունակությունը լուծել 3 կաթիլ (ոչ ավելի) թորած ջրում և, բացարձակ վճիռ լուծույթը տեղափոխելով փորձանոթ, կատարել Na^+ -ի հայտնաբերման ռեակցիան (KH_2SbO_4 -ի հետ): Անհրաժեշտ է նշել, որ նստվածքը հաճախ առաջանում է թեթև պղտորության ձևով:

Ա ռ ա ջ ա դ ր ա ն ք

Վերլուծական I և II խմբերի կատիոններին, ինչպես նաև վերլուծության համակարգված ընթացքի հաջող ուսումնասիրման համար անհրաժեշտ է անօրգանական քիմիայի գաղափարներից կրկնել հետևյալ և նախկան հարցերը:

1. Քլիմական ռեակցիաների արագությունը և քիմիական հավասարակշռություն: Զանգվածների ներդրությունը օրենքը և նրա նշանակությունը: Հավասարակշռված կոնցենտրացիան և հավասարակշռության հաստատումը:

2. էլեկտրոլիտիկ դիսոցիացիայի տեսության հիմունքները: Դիսոցիացիայի աստիճան (դիսոցիացիայի աստիճանի կախվածությունը լուծույթի կոնցենտրացիայից):

3. լուծույթների կոնցենտրացիան և նրանց արտահայտման եղանակները:

4. Հավասարակշռություն էլեկտրոլիտների լուծույթներում Դիսոցիացիայի հաստատում: Ուժեղ և թույլ էլեկտրոլիտներ:

5. Ջրի իոնական արտադրյալը: Ջրածնային իոնների կոնցենտրացիան և pH-ը: Միջավայրի ռեակցիայի բնույթը:

6. Ազդերի հիդրոլիզը:

7. Տարասեռ (հետերոգեն) հավասարակշռություն: Լուծելիության արտադրյալի կանոնը և լուծելիություն: Համանման իոնի ազդեցությունը լուծելիության վրա:

Սառուգոդակաճ հարցեր և խնդիրներ

1. Ինչպե՞ս կարելի է հայտնաբերել II խմբի կատիոնների առկայությունը լուծույթում:

2. Ի՞նչ ձևով կարելի է անջատել I խմբի կատիոնները II խմբի կատիոններից:

3. Ինչո՞ւ վերլուծական I խմբի կատիոնները խմբային ռեակտիվ չունեն:

4. Ինչո՞վ բացատրել, որ վերլուծական խմբի կատիոնների համար որպես խմբային ռեակտիվ օգտագործվում է $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ը, այլ ոչ թե Na_2CO_3 -ը կամ K_2CO_3 -ը:

5. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ, որ վերլուծական II խմբի խմբային ռեակտիվի ազդեցությունն արդյունավետ լինի: Ինչո՞վ բացատրել, որ անհրաժեշտ է՝ ա) փորձարկվող լուծույթին ավելացնել NH_4OH -ի ու NH_4Cl -ի լուծույթներ, բ) խառնուրդը տաքացնել:

6. Ինչպե՞ս են վարվում II խմբի խմբային ռեակտիվի ազդեցության հետևանքով ստացված նստվածքի հետ:

7. Ինչպե՞ս են հայտնաբերում NH_4^+ կատիոնը լուծույթում:

8. Ինչո՞ւ լուծույթում NH_4^+ կատիոնի առկայության դեպքում պետք է այն հեռացնել: Ի՞նչ եղանակով կարելի է դա անել:

9. Նշել այն պայմանները, որոնք անհրաժեշտ են Na^+ կատիոնը կալիումի դիհիդրոտանտրոնատի (KH_2SbO_4) ներգործությամբ հայտնաբերելու համար: Na^+ կատիոնի հայտնաբերմանը ո՞ր իոններն են խանգարում և ինչո՞ւ:

10. Ինչպե՞ս կարելի է K^+ կատիոնը հայտնաբերել լուծույթում: Ո՞ր իոններն են խանգարում K^+ կատիոնի հայտնաբերմանը: Գրել համապատասխան ռեակցիաների հավասարումները: Ինչպե՞ս կարելի է վերացնել խանգարիչ ազդեցությունը:

11. Ինչո՞ւ Na^+ կատիոնը հայտնաբերելուց առաջ անհրաժեշտ է լուծույթից հեռացնել NH_4^+ և Mg^{2+} կատիոնները:

12. Ինչո՞ւ Mg^{2+} կատիոնը Na^+ -ից անջատելու ժամանակ օգտագործում են KOH -ի լուծույթ, այլ ոչ թե NaOH կամ $\text{NH}_3 \cdot \text{H}_2\text{O}$:

13. Ի՞նչ պայմաններում կարելի է K^+ կատիոնը հայտնաբերել նստրվումի հիդրոտարտարառով ($\text{NaHC}_4\text{H}_4\text{O}_6$): Հայտնաբերման աչգ ռեակցիայի վրա ինչպե՞ս են ազդում միջավայրի հիմնայնությունը և թթվայնությունը:

14. Ինչո՞ւ Mg^{2+} կատիոնը վերագրում են կատիոնների I խմբին:

15. Ինչպե՞ս են հայտնաբերում Mg^{2+} կատիոնը լուծույթում:

16. Ինչո՞ւ վերլուծության ընթացքում անհրաժեշտ է անջատել I և II խմբերի կատիոնները և հեռացնել NH_4^+ իոնը անգամ այն դեպքում, եթե նա բացակայել է սկզբնական լուծույթում:

17. Ինչո՞ւ II խմբի կատիոնները I խմբից անջատելու համար ամոնիումի կարբոնատի միջոցով ավելացնում են $\text{NH}_3 \cdot \text{H}_2\text{O}$ -ի ու NH_4Cl -ի լուծույթներ և տաքացնում:

18. Ի՞նչ ձևով կարելի է Mg^{2+} կատիոնը անջատել Ca^{2+} և Ba^{2+} կատիոններից:

19. Կարելի՞ է արդյոք կալիումի քրոմատով (K_2CrO_4) հայտնաբերել Ba^{2+} կատիոնը Ca^{2+} կատիոնի առկայությամբ:

20. Ինչո՞ւ բարիումի կարբոնատի նստվածքը քաղախաթթվում լուծվում է ծծմբական թթվում՝ ոչ:

21. II խմբի ո՞ր կատիոններն են խանգարում Sr^{2+} կատիոնի հայտնաբերմանը:

22. Ինչպե՞ս անջատել Sr^{2+} կատիոնը Ba^{2+} -ից:

23. Կարելի՞ է արդյոք ամոնիումի օքսալատով ($(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$) որոշել Ca^{2+} կատիոնը Ba^{2+} իոնի առկայությամբ:

24. Կազմել վերլուծական I և II խմբերի կատիոնների՝

ա) K^+ , NH_4^+ , Sr^{2+} , Ba^{2+}

բ) Na^+ , K^+ , Mg^{2+} , Sr^{2+}

քան էթիլալկոհոլ և 10—12 կաթիլ խիտ H_2SO_4 : Խառնուրդը թեթե-
վակի տաքացնել: Ացետատ անիոնի առկայության դեպքում լու-
ծույթից դուրեկան հոտ է զգացվում:

Անիոնների վերլուծությունը

Անիոնների հայտնաբերումը հիմնված է որոշակի ռեակտիվ-
ների միջոցով այնպիսի քիմիական միացությունների առաջացման
վրա, որոնք հեշտությամբ ճանաչվում են իրենց արտաքին նշան-
ներով:

Անիոնների վերլուծության առանձնահատկությունն այն է, որ
այս դեպքում վերլուծության հստակ համակարգված ընթացքը բա-
ցակալում է: Դործնականորեն առանձին անիոնների վերլուծույթու-
նը կատարում են կոտորակային մեթոդով. անիոնները հայտնաբե-
րում են լուծույթի առանձին բաժիններում, որոնք չեն պարունա-
կում փոխաբանարիչ անիոններ: Բայց հայտնի են այնպիսի ա-
նիոնների խառնուրդներ, որոնց վերլուծությունը կոտորակային ձե-
վով անհնար է կամ խիստ դժվար: Ուստի մի շարք հեղինակներ ա-
ռաջարկում են անիոնների խառնուրդների վերլուծության որոշակի
հաջորդականություն՝ նկատի առնելով խանգարիչ իոնների առկա-
յությունը:

Իոնների խմբերն են՝

1. S^{2-} , $S_2O_3^{2-}$, SO_3^{2-} , SO_4^{2-}

2. CO_3^{2-} , SO_3^{2-} , $S_2O_3^{2-}$

3. $S_2O_3^{2-}$, SO_3^{2-} , SO_4^{2-} , CO_3^{2-} , PO_4^{3-}

4. NO_3^- , NO_2^-

5. Cl^- , Br^- , I^-

Կան և անիոնների այլ խմբեր:

Սույն ուսումնական ձեռնարկում նկարագրվում են միայն այն անիոնները, որոնք նախատեսված են ծրագրում. ընդ որում, դրանց մի մասը արդեն դիտարկվել է կատիոնների բնորոշ ռեակցիաները ուսումնասիրելիս:

Անիոնների հայտնաբերման ժամանակ օգտագործվում են քիչ լուծելի և գունավոր միացություններ գոյացնելու նրանց ընդունակությունը, օքսիդավերականդման, կոմպլեքս միացություններ առաջացնելու հատկությունները (վերջինս հաճախ կիրառվում է իոնների բաժանման համար), անիոնների համապատասխան թթուների անկայունությունը, խմբային ռեակտիվի ազդեցությունը և այլն:

Նմանաբան ռեակտիվները կիրառում են ոչ թե անիոնների խմբերը բաժանելու, այլ դրանք հայտնաբերելու համար: Եթե որևէ խումբ բացակայում է, ապա բնականաբար վերանում է նրա անիոնների վերլուծության անհրաժեշտությունը:

Անիոնների խառնուրդի վերլուծությունը սկսում են նախնական փորձարկումներով, այսինքն՝ առանձին նմուշներում ցնդող թթուների անիոնները, ծանր մետաղների կատիոնները, օքսիդիչ և վերականգնիչ անիոնները հայտնաբերելով:

Ծանր մետաղների կատիոնների առկայությունը խանգարում է առանձին անիոնների հայտնաբերմանը և որոշ նախնական վերլուծությունների ընթացքին: Ուստի դրանք որոշում են մինչ անիոնների նախնական փորձարկումները և առկայության դեպքում հեռացնում: Նշված կատիոնների բացակայության դեպքում անիոնների վերլուծությունը կատարում են ստորև տրվող սխեմայով:

1. Նախնական փորձարկումներ

1.1. Հետազոտվող լուծույթի միջավայրի որոշումը

Լուծույթի միջավայրը որոշում են ունիվերսալ ինդիկատորով: Եթե $pH \ll 7$, առեմն բացակայում են CO_3^{2-} , SO_3^{2-} , $S_2O_3^{2-}$, S^{2-} , NO_2^- իոնները:

1.2. Վերականգնիչ անիոնների առկայությունը

Հետազոտվող լուծույթի 3—5 կաթիլին ավելացնել 1—2 կաթիլ H_2SO_4 -ի, նույնքան $KMnO_4$ -ի նոսր լուծույթ: Կալիումի պերմանգոնատի սնդունացումը վկայում է լուծույթում վերականգնիչ անիոնների (SO_3^{2-} , $S_2O_3^{2-}$, S^{2-} , I^-) առկայության մասին:

1.3. Յֆսիդիչ անիոնների առկայությունը

Հետազոտվող լուծույթի 3—5 կաթիլին ավելացնել 1 կաթիլ H_2SO_4 , 2—3 կաթիլ քլորաֆորմ և նույնքան KI -ի լուծույթ: Ստացված խառնուրդը թափահարել: Եթե քլորաֆորմի շերտը ստանում է կարմրա-ջանուշակադույն երանգ, առեմն առկա են օքսիդիչ անիոններ (NO_2^- և ուրիշներ):

1.4. Ցնդող թթուների հայտնաբերումը

Հետազոտվող լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան ծծմբական թթվի նոսր լուծույթ և թույլ տաքացնել: Գազերի առաջացումը վկայում է ցնդող թթուների անիոնների (CO_3^{2-} , SO_3^{2-} , $S_2O_3^{2-}$, S^{2-} , NO_2^-) առկայության մասին:

S^{2-} , անջատվում է H_2S սնդույն գազը՝ նեխած ձվի հոտով,

SO_3^{2-} և $S_2O_3^{2-}$, անջատվում է SO_2 անոսյն գազը՝ սլորվող ծծմբի սուր հոտով,

NO_2^- , անջատվում է NO_2 գորշ գույնի գազը,

CO_3^{2-} , անջատվում է անոսյն, անհոտ CO_2 գազը:

2. I խմբի անիոնների հայտնաբերումը

2.1. Հետազոտվող լուծույթի միջավայրը պետք է լինի շեղոք կամ թույլ հիմնային ($pH \approx 7-9$): Ստուգել ունիվերսալ ինդիկատորով: Եթե լուծույթի $pH < 7$, ապա անհրաժեշտ է միջավայրը շեղոքացնել բարիումի հիդրօքսիդի լուծույթով:

2.2. Չհեղճացրած լուծույթի 3—4 կաթիլին ավելացնել նույն-
քան BaCl_2 -ի լուծույթ: Եթե անջատվում է նստվածք, ապա լու-
ծույթում առկա են I խմբի անիոնները:

3. II խմբի անիոնների հայտնաբերումը

Հետադոստվող լուծույթի 2—3 կաթիլին ավելացնել 1—2 կաթիլ
նոսր HNO_3 -ի և 2—3 կաթիլ AgNO_3 -ի լուծույթ: Նստվածքի գոյա-
ցումը ապացուցում է II խմբի անիոնների առկայությունը:

Ստացված նստվածքի գույնով երբեմն հնարավոր է լինում
սլարգել որոշ անիոնների առկայությունը: S^{2-} իոնի դեպքում նբստ-
վածքը սև է, I^- -ի դեպքում՝ դեղին, իսկ Cl^- -ի և Br^- -ի դեպքում՝
սպիտակ:

Ի տարբերություն կատիոնների, համարյա բոլոր անիոնները
կարելի է հայտնաբերել հետազոտվող լուծույթում՝ կոստորակային
եղանակով: Մի շարք անիոններ հայտնաբերելիս անհրաժեշտ է
հաշվի առնել խանգարիչ իոնների առկայությունը:

Քիմիական վերլուծության բնթացքն ավելի լավ քննադիտելու և
յուրացնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ առանձին խմբերի
վերլուծությանը:

I խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը

(SO_4^{2-} , SO_3^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$, CO_3^{2-} , PO_4^{3-})

1. I խմբի անիոնների և SO_4^{2-} իոնի հայտնաբերումը

Հետազոտվող լուծույթի 3—5 կաթիլին ավելացնել 2—3 կաթիլ
 BaCl_2 -ի լուծույթ: Սպիտակ նստվածքի գոյացումը ապացուցում է I
խմբի անիոնների առկայությունը: Նստվածքն անջատել ցենտրի-
ֆուգելով, սյնուհշետե վրան ավելացնել HCl -ի լուծույթ և խառ-
նել: ապակյա ձողիկով: Եթե նստվածքը լրիվ չի լուծվում, ուրեմն
առկա է SO_4^{2-} իոնը:

2. $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնի անջատումը

Հետազոտվող լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել 7—8 կաթիլ
 SrCl_2 -ի կամ $\text{Sr}(\text{NO}_3)_2$ -ի լուծույթ: 8—10 բոպկից ցենտրիֆուգել
և 2—3 անգամ լվանալ թորած ջրով մինչև $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնի լրիվ հե-
ռացումը:

Նստվածքը՝ SrSO_4 , SrSO_3 , SrCO_3 , $\text{Sr}_3(\text{PO}_4)_2$,
Ցենտրիֆուգատը՝ SrS_2O_3 :

3. $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնի հայտնաբերումը

Ցենտրիֆուգատի (կետ 2-րդ) 3—4 կաթիլին ավելացնել
(կաթիլներով) յոդի լուծույթ և դիտել $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնի առկայության
դեպքում լուծույթի գունազրկումը:

4. Նստվածքի լուծումը և SO_3^{2-} իոնի հայտնաբերումը

Նստվածքը (կետ 2-րդ) լուծել նոսր ծծմբական թթվի լուծույթ-
ում և ավելացնել 2—3 կաթիլ KMnO_4 -ի լուծույթ: Կալիումի պեր-
մանգանատի մոթեպայմանի անհետացումը վկայում է լուծույթում
 SO_3^{2-} իոնի առկայության մասին:

5. CO_3^{2-} իոնի հայտնաբերումը

5.1. SO_3^{2-} և $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնների բացակայության դեպքում

Հետազոտվող շեղոր լուծույթից 5—6 կաթիլ լցնել փորձանոթի
մեջ, սալիացնել 8—10 կաթիլ HCl -ի լուծույթ և արագ փակել իր-
ցանով, որի միջով անցնում է կրաշրով լցված կաթոցիկը: Եթե
կաթոցիկում լուծույթը պղտորվում է, ուրեմն առկա է CO_3^{2-} իոնը:
(Առաջացած պղտորությունը կարող է անհետանալ CaCO_3 -ը լու-
ծելի $\text{Ca}(\text{HCO}_3)_2$ -ի փոխարկվելու պատճառով: Ուստի փորձը կա-
տարելիս անհրաժեշտ է ուշադիր լինել):

5.2. SO_3^{2-} և $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնների առկայության դեպքում

Անհրաժեշտ է SO_3^{2-} և $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնները նախորոք բացառա-
նել: Դրա համար հետազոտվող լուծույթի 3—4 կաթիլին ավելացնել
նույնքան H_2O_2 -ի 10% անոց և 7—8 կաթիլ H_2SO_4 -ի նոս-
րացրած լուծույթ: Արագ փակել կրաշրով լցված կաթոցիկ ունկոց
խցանով, եթե կաթոցիկում պղտորություն է առաջանում, ուրեմն
լուծույթում առկա է CO_3^{2-} անիոնը:

6. PO_4^{3-} իոնի հայտնաբերումը

PO_4^{3-} իոնի հայտնաբերմանը խանգարում են վերականգնիչ ա-
նիոնները (SO_3^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$), քանի որ նրանք Mo(VI) -ը վերականգ-

նում են մինչև մոլիբդենային կապույտ, որում մոլիբդենը հանդես է գալիս տարբեր օքսիդացման աստիճանով:

Հետադոմվող լուծույթի 2—3 կաթիլին ավելացնել 4—5 կաթիլ խիտ աղտոտական թթու և եռացնել որից վերականգնիչ անիոնները օքսիդանում են և հեռացվում լուծույթից:

Այնուհետև ավելացնել 8—10 կաթիլ մոլիբդենային հեղուկ, մի փոքր բյուրեղային NH_4NO_3 և թույլ տաքացնել: PO_4^{3-} իոնի առկայության դեպքում ստացվում է դեղին բյուրեղային նստվածք:

II խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը

(S^{2-} , Cl^- , Br^- , I^-)

1. II խմբի անիոնների հայտնաբերումը

Հետադոմվող լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել նույնքան արծաթի նիտրատի (AgNO_3) լուծույթ: II խմբի անիոնների առկայության դեպքում առաջանում է նստվածք:

Նստվածքը՝ Ag_2S , AgCl , AgBr , AgI :

2. S^{2-} իոնի հայտնաբերումը

Հետադոմվող լուծույթի 2—3 կաթիլին ավելացնել 1-ական կաթիլ NH_4OH -ի և 1%-անոց նատրիումի նիտրատի լուծույթ: S^{2-} իոնի առկայության դեպքում առաջանում է կարմրամանուշակագույն երանգ: SO_4^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$ և SO_3^{2-} իոնները չեն խանգարում այս առկայություն:

3. S^{2-} իոնի հեռացումը

S^{2-} իոնի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է այն հեռացնել: Դրա համար հետադոմվող լուծույթի 5—6 կաթիլին ավելացնել 4—5 կաթիլ կադմիումի կարբոնատի (CdCO_3) թաքս պատրաստած կախույթ է խառնուրդը թափահարել: Ստացված գին նստվածքը (CdS) ցենտրիֆուգելով անջատել լուծույթից:

Նստվածքը՝ CdS (դեղն նեւեղ):

Ցենտրիֆուգատը՝ Cl^- , Br^- , I^- :

4. Cl^- իոնի անջատումը Br^- -ից և I^- -ից

Ցենտրիֆուգատի վրա ավելացնել 1—2 կաթիլ նոսր HNO_3 և կաթիլներով— AgNO_3 -ի լուծույթից մինչև լրիվ նստեցումը: Ցենտրիֆուգել և նստվածքը լվանալ թորած ջրով:

Նստվածքի (AgCl , AgBr , AgI) վրա ավելացնել 5—6 կաթիլ NH_4OH և 1—2 բուլե լավ թափահարել: Այս դեպքում AgCl -ը լուծվում է և անցնում լուծույթ, նստվածքում մնում են AgBr -ը և AgI -ը: Ցենտրիֆուգել և նստվածքը երկու անգամ լվանալ թորած ջրով:

Նստվածքը՝ AgBr , AgI :

Ցենտրիֆուգատը՝ $[\text{Ag}(\text{NH}_3)_2]\text{Cl}$:

5. Cl^- իոնի հայտնաբերումը

Ցենտրիֆուգատին ավելացնել 1 կաթիլ ֆենոլֆտալեին: Լուծույթը գունավորվում է վարդագույն: Այնուհետև կաթիլներով ավելացնել HNO_3 -ի լուծույթ մինչև գունադրկվելը: Եթե առաջանում է պղտորություն, ուրեմն առկա է Cl^- իոնը:

6. Նստվածքի լուծումը

Նստվածքին (կետ 4-րդ) ավելացնել քիչ քանակությամբ ցինկի փոշի կամ ցինկի կտոր, մի քանի կաթիլ թորած ջուր և խառնել ապակյա ձողիկով, ապա ցենտրիֆուգել:

Նստվածքը՝ Ag և Zn -ի ավելցուկ:

Ցենտրիֆուգատը՝ I^- և Br^- իոնները:

7. Br^- և I^- իոնների հայտնաբերումը

Ցենտրիֆուգատի 2—3 կաթիլին ավելացնել նույնքան քլորաֆորմ և քլորաջուր: Ուժեղ թափահարել: I^- իոնի առկայությամբ քլորաֆորմային շերտը գունավորվում է կարմրամանուշակագույն: Այնուհետև շարունակել քլորաջրի ավելացումը մինչև լուծույթի գունազրկվելը (ապացույց, որ լուծույթում առկա է միայն I^- իոնը): Եթե առկա է Br^- իոնը, քլորաֆորմի շերտը դեղին գունավորում է ստանում:

III խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը
(NO_3^- , NO_2^- , CH_3COO^-)

III խմբի անիոնները խմբային ռեակտիվ չունեն, և ասի դրանք հայտնաբերում են կոտորակային ռեակցիաներով:

1. NO_2^- իոնի հայտնաբերումը

1.1. Հեաազոտվող լուծույթի 3—4 կաթիլին ավելացնել հալման Գրիսի լուծույթ: Եթե առաջանում է կարմիր գունավորում, ուրեմն առկա է NO_2^- իոնը:

1.2. NO_2^- իոնը կարելի է հայտնաբերել նաև հեաազոտվող լուծույթի 2—3 կաթիլին նույնքան ծծմբական թթվի հալման լուծույթի և 1—2 կաթիլ KMnO_4 -ի լուծույթ ավելացնելով: Կոչիումի պլու՝ մանգանատի դուռադրվումը վկայում է NO_2^- իոնի առկայությունը մասին:

2. NO_3^- իոնի հայտնաբերումը

2.1. NO_3^- իոնի րացակայության դեյում

Փորձանոթը թրջել հեաազոտվող լուծույթով և թրջված սուրճի գոլորտվումը կաթիլցնել դիֆենիլամինի լուծույթ: Եթե առաջանում է կապույտ գունավորում, ուրեմն առկա է NO_3^- իոնը:

2.2. NO_3^- իոնի առկայության դեյում

NO_3^- իոնը խանգարում է NO_2^- -ի հայտնաբերմանը, ուստի անհրաժեշտ է այն հեաաջնել: Դրա համար հեաազոտվող լուծույթի 3—4 կաթիլին, մինչև հազենալը, ավելացնել պինդ NH_4Cl և տաքացնել ջրային բաղնիքի վրա: Այդ դեպքում NO_2^- իոնը քայքայվում է՝ անջատելով N_2 :

Ստացված լուծույթին ավելացնել 5—6 կաթիլ խիտ H_2SO_4 , պղնձի կտոր և տաքացնել: Անջատվող գույզ դույնի գույզ վկայում է NO_3^- իոնի առկայությունը մասին:

3. CH_3COO^- իոնի հայտնաբերումը

Հեաազոտվող լուծույթի 3—4 կաթիլին ավելացնել նույնքան FeCl_3 -ի լուծույթ: Առաջանում է կարմրագույն գունավորում: Թորած ջրով այն նստրացնել 2—3 անգամ և տաքացնել: Այս դեպքում հիդրոլիզի ռեակցիայի հեառանքով անջատվում է երկաթ (III)-ի օքսիաջենաաի $[\text{Fe}_3(\text{OH})_2\text{O}_5\text{CH}_3\text{COO}]$ կարմրագույն նստվածքը:

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Դ. Ր. Ա. Ն. Ք.

Անիոնների հեաաղակցումները ուսումնասիրելու ընթացքում ևս անհրաժեշտ է էական անօրդոնական քիմիայի տեսական բաժինները մի քանի կարեոր հարցեր:

1. Հարաբեր (հեաադրվել) հալմատաբաղադրանքի և լուծելիության տարադրալի կանոնը:

2. Իզոլի հիդրոլիզը:

3. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ:

4. Կոմպլեքսային միացություններ:

Ստացված կանոններ և խնդիրներ

1. Ինչպե՞ս են տարբերվում անիոնների և կատիոնների վերլուծությունները:

2. Ի՞նչ դեր են կատարում խմբային ռեակտիվները անիոնների վերլուծության մեջ:

3. Թվել անիոնների I խմբին պատկանող իոնները: Ի՞նչ ռեակտիվով կարելի է հայտնաբերել I խմբի անիոնների առկայությունը:

4. Կարելի՞ է արդյոք SO_4^{2-} անիոնը հայտնաբերել CO_3^{2-} , SO_3^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$, PO_4^{3-} անիոնների առկայությամբ և ինչպե՞ս:

5. Ի՞նչ վեաակադիզիլ անիոններ են ձեռ հայտնի, ինչպե՞ս կարելի է դրանք հայտնաբերել փորձարկվող լուծույթում:

6. Ինչպե՞ս հայտնաբերել II խմբի անիոնների առկայությունը լուծույթում:

7. Նշել շնորդ թթուների անիոնները և ցույց տալ նրանց հայտնաբերման ռեակցիաները:

8. Ի՞նչ ռեակցիաներով կարելի է հայտնաբերել SO_3^{2-} անիոնը փորձարկվող լուծույթում:

9. Ի՞նչ են PO_4^{3-} անիոնի հայտնաբերման ռեակցիաները: Ինչպե՞ս տարբերել նատրիումի ֆոսֆատը նատրիումի հիդրոֆոսֆատից և դիհիդրոֆոսֆատից:

10. Դիտե՞ք, ապա՞յք, SO_3^{2-} -ի առկայությամբ CO_3^{2-} անիոնի հայտնաբերման եղանակ: Դրել հնարավոր ռեակցիաները համարումները:

11. P^{5+} անիոններ են խանգարում «մոլիբդենային հեղուկով» PO_4^{3-} անիոնի հալոնաբերմանը:

12. P^{5+} ռեակտիվով կարելի է սրտել քլորիդ, բրոմիդ և յոդիդ անիոնների առկայությունը:

13. Ինչպե՞ս կարելի է հայտնաբերել Cl^- անիոնը Br^- և I^- իոնների առկայությամբ:

14. Ինչո՞ւ հիմնային միջավայրում Br^- և I^- անիոնները քլորաջրով հնարավոր չէ հայտնաբերել: Փրել համապատասխան ռեակցիաների հավասարումները:

15. Կարելի՞ է արվոքի հայտնաբերել Br^- ու I^- անիոնները և ի՞նչ եղանակով՝ լուծույթում դրանց համատեղ առկայության դեպքում:

16. Ինչպե՞ս հայտնաբերել նիտրատ անիոնը NO_2^- անիոնի առկայությամբ:

17. Փրել CH_3COO^- անիոնի հայտնաբերման հայտնի եղանակների ռեակցիաների հավասարումները և նշել դրանց իրազորման պայմանները:

18. Ինչպե՞ս հայտնաբերել S^{2-} իոնը լուծույթում:

19. Ինչպե՞ս հայտնաբերել SO_3^{2-} իոնը լուծույթում:

ա) SO_4^{2-} իոնի առկայությամբ,

բ) CO_3^{2-} իոնի առկայությամբ:

գ) $\text{S}_2\text{O}_3^{2-}$ իոնի առկայությամբ:

20. Ինչպե՞ս հայտնաբերել օքսիդիչ անիոնները փորձարկվող լուծույթում:

21. Ո՞ր անիոններն են խանգարում ֆոսֆատ իոնի հայտնաբերմանը:

22. I խմբի անիոններից ոչի՞ն է նստեցնում BaCl_2 -ը թթվային միջավայրում:

23. Փանի՞ մլ AgNO_3 -ի 2 ն լուծույթ պետք է ավելացնել 0,25 դ յոդիդ իոնը լուծույթից լրիվ նստեցնելու համար:

24. Հաշվել՝ քանի՞ մլ BaCl_2 -ի 2 ն լուծույթ պետք է ավելացնել՝ լրիվ նստեցնելու համար:

ա) սուլֆատ իոնը՝ 5 մլ K_2SO_4 -ի 1 ն լուծույթից:

բ) կարբոնատ իոնը՝ 5 մլ Na_2CO_3 -ի 0,5 ն լուծույթից:

25. 2 լ բացախաթթվի 0,1 ն լուծույթին ավելացրել են 50 դ CH_3COONa : Հաշվել լուծույթի pH-ը:

26. NH_4OH -ի 2 ն լուծույթի 25 մլ-ի մեջ մուծել են 0,8377 դ Fe^{3+} իոններ՝ $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$ -ի բյուրեղների ձևով: Հաշվել NH_4OH -ի ներմալույթանք նստվածքազոյացումից հետո:

27. Հաշվել $\text{Al}(\text{OH})_3$ -ի լուծելիությունը NH_4OH -ի 0,1 մ. առնոց լուծույթում:

28. Հաշվել PbCl_2 -ի լուծելիությունը KNO_3 -ի 0,4 մ. առնոց լուծույթում:

ՉՈՐ ԱՂԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆԸ

Վերլուծության համար առաջարկված շոր աղը միանգամայն ուրույն նյութ է, որը հիմնականում բուլկացած է լինում մեկ կա-
տիոնից և մեկ անիոնից: Հետևապես շոր աղի վերլուծությունը հան-
գում է այդ միակ կատիոնի և միակ անիոնի հայտնաբերմանը,
որի հիման վրա որոշվում է որոնելիք աղի բանաձևը:

Ստացած շոր աղը մի մասը պահել վերլուծության արդյունքը
ստացելու, իսկ հարկ եղած դեպքում նաև վերլուծությունը կրկնե-
լու համար: Մնացածն օգտագործել լուծույթ պատրաստելու հա-
մար, որի մեջ պետք է հայտնաբերվի և՛ կատիոնը, և՛ անիոնը:
Հետևապես առաջին հերթին անհրաժեշտ է մի շարք փորձարկում-
ների միջոցով գտնել այն լուծիչը, որի մեջ աղը կարող է լուծվել:

1. Աղի լուծելիության փորձարկումը

Աղի 2—3 բյուրեղիկ մշակել թորած ջրի 8—10 կաթիլում՝ սկզբ-
բում սենյակային ջերմաստիճանի, իսկ հետո՝ տաքացման պայման-
ներում: Համոզվելով, որ աղի ջրի մեջ չի լուծվում, փորձել այն լու-
ծել թթուների մեջ: Թթու լուծիչի քնտրությունը կատարել հետևյալ
հաջորդականությամբ՝ աղաթթվի (HCl)՝ 2 ն լուծույթ, ազոտական
թթվի (HNO_3) 2 ն լուծույթ, իրիտազոտական թթու, իրիտազոթթու,
բացախաթթու: Եթե թվարկված թթուներում աղը չի լուծվում, փոր-
ձել այն լուծել ամոնիակի լուծույթում (NH_4OH): Եթե վերահիշյալ
լուծիչներից և ոչ մեկում աղը չի լուծվում, ապա պատրաստել այդ
աղի «սողաչի մզուկը» (քաշուկը): Այդ նպատակով 0,05—0,1 գ շոր
աղից վերցնել ճենապակյա տիպի մեջ, ավելացնել 2—3 մլ սողաչի
հազեցած լուծույթ և եռացնել 5 րոպե: Ստացված լուծույթը նստվածքի
հետ ցենտրիֆուգել: Նստվածքում որոշել Ba^{2+} կատիոնի առկայու-
թյունը, իսկ ցենտրիֆուգատում՝ SO_4^{2-} անիոնի: Եթե այդ իոնները
իսկապես հայտնաբերվում են, ապա շոր աղը BaSO_4 -ն է: Բա-
ցասական արդյունքի դեպքում իոնների որոնումը պետք է շարու-
նակել:

2. Լուծույթի պատրաստումը

Եթե լուծիչն ընտրված է, շոր աղը լուծել նրա 4—6 մլ
ծավալում: Լուծույթի մի մասն օգտագործել կատիոնի, իսկ մյուսը՝

անիոնի որոշման համար: Ինչպես կատիոնի, այնպես և անիոնի
հայտնաբերման փորձարկումները կատարում են՝ օգտագործելով
առանձին նմուշներ (յուրաքանչյուր փորձարկման համար՝ 3—4
կաթիլ լուծույթ):

3. Կատիոնի հայտնաբերումը

3.1. Առաջին նմուշի մեջ նեալերի ռեակտիվով որոշել NH_4^+
կատիոնի առկայությունը:

3.2. Երկրորդ նմուշում $\text{K}_3[\text{Fe}(\text{CN})_6]$ ռեակտիվով որոշել Fe^{2+}
կատիոնի առկայությունը (զոյանում է տուրնբուլյան կապույտի
նստվածքը):

3.3. Նշված երկու կատիոնների բացակայության դեպքում եր-
րորդ նմուշում $\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6]$ ռեակտիվի միջոցով ստուգել Fe^{2+}
կատիոնի առկայությունը: Եթե այն առկա է, ապա ստացվում է
բուրյանյան լազույրի կապույտ նստվածք:

Այս նախնական փորձարկումների բացասական արդյունքի
դեպքում հաջորդաբար կրկին ստուգվում է կատիոնների խմբերի
առկայությունը:

3.4. Կատիոնների V խմբի առկայության որոշման փորձը:
Փորձարկվող լուծույթի նմուշին ավելացնել աղաթթվի 2 ն լուծույ-
թի 3—4 կաթիլ: Եթե ստացվում է սպիտակ նստվածք, ուրեմն առ-
կա Ն կատիոնների V խումբը (Pb^{2+} , Ag^+ կամ Hg_2^{2+}): Դրանից
հետո առանձին նմուշներում համապատասխան մասնակի ռեակ-
ցիաների միջոցով որոշվում է կատիոնը:

Իսկ եթե աղաթթվի ազդեցությունից նստվածք չի առաջանում,
զա վկայում է աղի բաղադրության մեջ V խմբի կատիոնների բա-
ցակայության մասին: Հետևապես կատիոնը պետք է փնտրել մյուս՝
IV խմբում:

3.5. Նախորդ փորձի աղաթթվով մշակված նմուշն օգտագոր-
ծել կատիոնների IV խմբի առկայությունը որոշելու համար: Այդ
նմուշը տաքացնել ու նրա միջով բաց թողնել ծծմբաջրածնի հոսք:
Եթե ստացվում է դեղին, դորշ-շագանակագույն կամ սև նստվածք,
ուրեմն առկա են Hg^{2+} , Cd^{2+} , Cu^{2+} կամ Bi^{3+} կատիոնները: Նման
արդյունքի դեպքում համապատասխան մասնակի ռեակտիվների

օդնությամբ որոշվում է, թե այդ իոններից որ կատիոնն է առկա աղի մեջ:

IV խմբում կատիոնի բացակայության դեպքում այն փնտրել III-ում:

3.6. Փորձարկվող լուծույթի նմուշին ավելացնել 1-ական կաթիլ NH_4Cl -ի ու NH_4OH -ի և 3—5 կաթիլ $(\text{NH}_4)_2\text{S}$ -ի լուծույթ: Նստվածքի գոյացումը վկայում է կատիոնների III խմբի առկայության մասին: Այդ դեպքում մասնակի ռեակտիվների օդնությամբ պետք է որոշել, թե Zn^{2+} , Al^{3+} , Mn^{2+} , Cr^{3+} , Ni^{2+} և Co^{2+} կատիոններից որն է նստվածք առաջացրել (երկաթի առկայությունը պարզվել է սկզբում):

Նստվածքի բացակայության դեպքում կատիոնը պետք է փնտրել II խմբում:

3.7. Փորձարկվող լուծույթի նմուշին ավելացնել 1-ական կաթիլ NH_4Cl -ի ու NH_4OH -ի և 2—3 կաթիլ $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ -ի լուծույթ: Եթե առաջանում է նստվածք, ուրեմն որոշվող կատիոնը II խմբին է պատկանում: Այն որոշելու համար կատարել համապատասխան մասնակի ռեակցիաներ:

3.8. Եթե նախորդ փորձը ևս բացասական արդյունք է տալիս, ապա կատիոնը պետք է փնտրել I խմբում: Այդ նպատակով առանձին նմուշներում իրագործում են Na^+ , K^+ կամ Mg^{2+} կատիոնների հայտնաբերման մասնակի ռեակցիաների փորձարկումները և որոշում աղի բաղադրիչ կատիոնը (NH_4^+ իոնի փորձարկումը կատարվել նախօրոք):

4. Անիոնի հայտնաբերումը

Անիոնի բնույթի մասին կարելի է դատել՝ ելնելով որոշ փաստերից:

4.1. Հայտնաբերված կատիոնից, որը կարող է որոշ շափով պատկերացում տալ անիոնի մասին:

4.2. Աղի լուծելիության տվյալներից: Այսպես, եթե աղը ջրում լուծվում է, իսկ հայտնաբերված է Ba^{2+} կատիոնը, ապա անիոնը կարող է լինել միայն II կամ III խմբից, որովհետև I-ի խմբի անիոնների բաբիումական աղերը ջրում անլուծելի են:

Իսկ եթե աղը ջրում անլուծելի է, իսկ հայտնաբերված կատիո-

նը Ba^{2+} է, ապա անիոնը կարող է լինել միայն I խմբից (CO_3^{2-} , SO_4^{2-} , SO_3^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$ կամ PO_4^{3-}):

4.3. Միջավայրի ռեակցիայի հիման վրա: Աղի ջրային լուծույթի թթվային միջավայրը վկայում է այն մասին, որ աղը թույլ հիմքից ու ուժեղ թթվից է գոյացել, հետևապես աղի որոնվող անիոնը կարող է լինել՝ SO_4^{2-} , NO_3^- , Cl^- , Br^- կամ I^- : Իսկ եթե միջավայրը հիմնային է, ուրեմն աղն առաջացել է ուժեղ հիմքից և թույլ թթվից, հետևապես պետք է փորձարկել ու որոնել թույլ թթուներից որն է մեկի անիոնը:

Չեղոք միջավայրը նշանակում է, որ աղը մեծ մասամբ արդյունք է ուժեղ հիմքի ու ուժեղ թթվի փոխազդեցության, ուստի անիոնը պետք է փնտրել ուժեղ թթուների մնացորդների շարքում:

Անիոնի որոշմանը ինչ-որ շափով կարող է խանգարել կատիոնի տեսակը: Այսպես, օրինակ, III, IV և V վերլուծական խմբերի կատիոնները անիոնի հայտնաբերմանը խանգարում են, իսկ I-ը և II-ը՝ ոչ: Ելնելով դրանից, եթե հայտնաբերված կատիոնը պատկանում է III, IV կամ V խմբերից, որն է մեկին, ապա անհրաժեշտ է աղի նմուշից պատրաստել «սոդայի մզուկ», ցննորիֆուգել ու ցննորիֆուգատում նոր միայն որոշել «ազատված» անիոնը:

4.4. Անիոնը հայտնաբերվում է տարբեր եղանակներով, կախված նրանից՝ աղը լուծվում է ջրում, թե ոչ:

5. Աղը ջրում լուծվելու դեպքում

Վերլուծության էությունն այն է, որ նմուշների փորձարկման միջոցով նախ որոշվում է տնիոնների խումբը, իսկ այնուհետև, այդ խմբի սահմաններում, մասնակի ռեակցիաների միջոցով հայտնաբերվում է անիոնը:

5.1. Փորձարկվող լուծույթի նմուշին ավելացնել 3—4 կաթիլ BaCl_2 -ի լուծույթ: Եթե ստացվում է նստվածք, ուրեմն անիոնը պատկանում է I խմբին՝ CO_3^{2-} , $\text{S}_2\text{O}_3^{2-}$, SO_3^{2-} , SO_4^{2-} կամ

PO_4^{3-} -ի հսկ թե զրանցից որն է փնտրվողը, պետք է որոշել առանձին նմուշներում՝ յուրաքանչյուր անիոնին բնորոշ մասնակի ուսկացիաների օգնությամբ:

Եթե I խմբի փորձարկումը բացասական արդյունք է տալիս, փորձը կատարել հաջորդ խմբի համար:

5.2. Լուծույթի երկրորդ նմուշին ավելացնել 2—3 կաթիլ AgNO_3 -ի և 2 կաթիլ 2 Ն HNO_3 -ի լուծույթ: Եթե ստացվում է նստվածք, ուրեմն անիոնը պատկանում է II խմբին՝ S^{2-} , Cl^- , Br^- կամ I^- , որի բնույթը անհրաժեշտ է որոշել համապատասխան մասնակի ուսկացիաների միջոցով:

Իսկ եթե II խմբում էլ անիոնը չի հայտնաբերվում, անհրաժեշտ է որոշումը շարունակել անիոնների III խմբում:

5.3. Առանձին նմուշներում NO_2^- , NO_3^- և CH_3COO^- անիոնների մասնակի ուսկացիաների միջոցով որոշել թե զրանցից որն է որոնվող անիոնը:

6. Արը ջրում լուծվելու դեպքում

Այս տարբերակում հնարավոր է երկու դեպք:

6.1. Առկա է CO_3^{2-} անիոնը: Դա հաստատելու համար փորձարկվող լուծույթի նմուշին ավելացնել մի քանի կաթիլ 2 Ն աղաթթվի լուծույթ: Եթե անջատվում են CO_2 գազի պղպջակներ, ուրեմն առկա է CO_3^{2-} -ն, իսկ եթե պղպջակ չկա, ուրեմն անիոնը բացակայում է:

6.2. Նախորդ փորձի բացասական արդյունքի դեպքում փորձարկվող նյութից պատրաստել «սողաչի մզուկ»: Անիոնը փնտրել ցենտրիֆուգատում, որը նախապես պետք է չհզոթացնել քաջաթաթի լուծույթով: Այնուհետև որոշել անիոնների խումբը, ապա, մասնակի ուսկացիաների միջոցով հայտնաբերել որոնվող անիոնը: Եթե ձևով ու այն հաջորդականությամբ, ինչպես նկարագրված է վերևում:

7. Վերլուծության հիման վրա կադմիկ չոր աղի բիմբուկան բանաձևը:

1. Թույլ քրուների և թույլ հիմքերի դիսոցիացիոն հաստատունները 25°C -ում

ա) Թ ք ր ւ ւ ւ ր

Դիսոցիացիոն	Բանաձևը	Դիսոցիացիոն հաստատունը	$\text{pK} = -\lg K$
1	2	3	4
Ազոտային թթու	HNO_2	$K = 4,0 \cdot 10^{-4}$	$\text{pK} = 3,40$
Բորաթթու	H_3BO_3	$K_1 = 6 \cdot 10^{-10}$ $K_2 = 1,8 \cdot 10^{-13}$ $K_3 = 1,6 \cdot 10^{-14}$	$\text{pK}_1 = 9,22$ $\text{pK}_2 = 12,74$ $\text{pK}_3 = 13,80$
Տետրաբորատթու	$\text{H}_2\text{B}_4\text{O}_7$	$K_1 = 1,0 \cdot 10^{-4}$ $K_2 = 1,0 \cdot 10^{-5}$	$\text{pK}_1 = 4,00$ $\text{pK}_2 = 9,00$
Ջրածնի պերօքսիդ	H_2O_2	$K_1 = 2,63 \cdot 10^{-12}$ $K_2 = 1,0 \cdot 10^{-25}$	$\text{pK}_1 = 11,58$ $\text{pK}_2 = 25,06$
Մրջնաթթու	HCOOH	$K = 1,77 \cdot 10^{-4}$	$\text{pK} = 3,82$
Արսենական թթու	H_3AsO_4	$K_1 = 5,98 \cdot 10^{-3}$ $K_2 = 1,05 \cdot 10^{-7}$ $K_3 = 3,99 \cdot 10^{-12}$	$\text{pK}_1 = 2,22$ $\text{pK}_2 = 6,98$ $\text{pK}_3 = 11,41$
Մետաբոսենային թթու	HAsO_2	$K = 6,9 \cdot 10^{-10}$	$\text{pK} = 9,22$
Օրթոարսենային թթու	H_2AsO_3	$K_1 = 6 \cdot 10^{-10}$ $K_2 = 1,7 \cdot 10^{-14}$	$\text{pK}_1 = 9,2$ $\text{pK}_2 = 13,77$
Ֆտորաջրածնական թթու	HF	$K = 6,61 \cdot 10^{-4}$	$\text{pK} = 3,18$
Սմբային թթու	H_2SO_3	$K_1 = 1,58 \cdot 10^{-2}$ $K_2 = 6,3 \cdot 10^{-8}$	$\text{pK}_1 = 1,80$ $\text{pK}_2 = 7,20$
Տեմբաջրածնական թթու	H_2S	$K_1 = 6,0 \cdot 10^{-8}$ $K_2 = 1,0 \cdot 10^{-14}$	$\text{pK}_1 = 7,2$ $\text{pK}_2 = 14,0$

1	2	3	4
Անտիմոնական թթու	H_3SbO_4	$K=4 \cdot 10^{-5}$	$pK=4,40$
Անտիմոնային թթու	HSbO_2	$K=1 \cdot 10^{-11}$	$pK=11,00$
Ածխաթթու	H_2CO_3	$K_1=4,45 \cdot 10^{-7}$ $K_2=4,69 \cdot 10^{-11}$	$pK_1=6,35$ $pK_2=10,33$
Քացախաթթու	$\text{HC}_2\text{H}_3\text{O}_2$	$K=1,8 \cdot 10^{-5}$	$pK=4,74$
Ֆոսֆորային թթու	H_3PO_3	$K_1=1,6 \cdot 10^{-2}$ $K_2=6,3 \cdot 10^{-7}$	$pK_1=1,80$ $pK_2=6,2$
Ֆոսֆորական թթու	H_3PO_4	$K_1=7,52 \cdot 10^{-3}$ $K_2=6,31 \cdot 10^{-8}$ $K_3=1,26 \cdot 10^{-12}$	$pK_1=2,12$ $pK_2=7,20$ $pK_3=11,9$
Պիրոֆոսֆորական թթու	$\text{H}_4\text{P}_2\text{O}_7$	$K_1=1,4 \cdot 10^{-1}$ $K_2=1 \cdot 10^{-2}$ $K_3=2,5 \cdot 10^{-7}$ $K_4=4 \cdot 10^{-10}$	$pK_1=0,85$ $pK_2=2,00$ $pK_3=6,70$ $pK_4=9,40$
Հիպոքլորային թթու	HClO	$K=5,01 \cdot 10^{-8}$	$pK=7,3$
Յիանաջրածնական թթու	HCN	$K=7,9 \cdot 10^{-10}$	$pK=9,21$
Օքսալաթթու	$\text{H}_2\text{C}_2\text{O}_4$	$K_1=5,4 \cdot 10^{-2}$ $K_2=5,4 \cdot 10^{-5}$	$pK_1=1,27$ $pK_2=4,27$
բ) Հ ի մ ֆ ե ռ			
Ամոնիումի հիդրօքսիդ	NH_4OH	$K=1,8 \cdot 10^{-5}$	$pK=4,76$
Բենզիդին	$\text{C}_{12}\text{H}_{12}\text{N}_2$	$K_1=9,3 \cdot 10^{-10}$ $K_2=5,6 \cdot 10^{-11}$	$pK_1=9,03$ $pK_2=10,25$
Հիդրազին	$\text{N}_2\text{H}_4 \cdot \text{H}_2\text{O}$	$K=1,2 \cdot 10^{-6}$	$pK=5,90$
Հիդրօքսիլամին	$\text{NH}_2\text{OH} \cdot \text{H}_2\text{O}$	$K=9,33 \cdot 10^{-9}$	$pK=8,03$

2. Օբյեկտային-վերականգնման ստանդարտ պոտենցիալները
(գ—գաղ, հ—հեղուկ, պ—պինդ)

Վերականգնված ձևը (վերականգնիլ)	Տված էլեկ-տրոնների թիվը	Օքսիդացված ձևը (օքսիդիլ)	Պոտենցիալ վ.
1	2	3	4
Li	1	Li^+	—3,03
K	1	K^+	—2,92
Ca	2	Ca^{2+}	—2,87
Na	1	Na^+	—2,71
Mg	2	Mg^{2+}	—2,37
Al	3	Al^{3+}	—1,66
Mn	2	Mn^{2+}	—1,19
Zn	2	Zn^{2+}	—0,763
S^{2-}	2	S	—0,48
Fe	2	Fe^{2+}	—0,44
Cd	2	Cd^{2+}	—0,403
Ni	2	Ni^{2+}	—0,23
Sn	2	Sn^{2+}	—0,14
Pb	2	Pb^{2+}	—0,126
H_2	2	2H^+	0,000
Sn^{2+}	2	Sn^{4+}	+0,15
Cu^+	1	Cu^{2+}	+0,153
$\text{H}_2\text{S} (գ)$	2	S	+0,171
$\text{S}^{2-} + 3\text{H}_2\text{O}$	6	$\text{SO}_3^{2-} + 6\text{H}^+$	+0,231
Cu	2	Cu^{2+}	+0,337
Cu	1	Cu^+	+0,520
2I^-	2	I_2	+0,536

1	2	3	4
$\text{HAsO}_2 + 2\text{H}_2\text{O}$	2	$\text{H}_3\text{AsO}_4 + 2\text{H}^+$	$+0,560$
MnO_4^{2-}	1	MnO_4^-	$+0,564$
H_2O_2	2	$\text{O}_2 + 2\text{H}^+$	$+0,682$
Fe^{2+}	1	Fe^{3+}	$+0,771$
$\text{NO}_2 (\text{г}) + \text{H}_2\text{O}$	1	$\text{NO}_3^- + 2\text{H}^+$	$+0,8$
Ag	1	Ag^+	$+0,799$
$\text{CrO}_2^- + 2\text{H}_2\text{O}$	3	$\text{CrO}_4^{2-} + 4\text{H}^+$	$+0,945$
$\text{NO} (\text{г}) + 2\text{H}_2\text{O}$	3	$\text{NO}_3^- + 4\text{H}^+$	$+0,96$
2Br^-	2	Br_2	$+1,087$
$\text{Mn}^{2+} + 2\text{H}_2\text{O}$	2	$\text{MnO}_2 (\text{u}) + 4\text{H}^+$	$+1,123$
$2\text{Cr}^{3+} + 7\text{H}_2\text{O}$	6	$\text{Cr}_2\text{O}_7^{2-} + 14\text{H}^+$	$+1,23$
2Cl^-	2	Cl_2	$+1,359$
Pb^{2+}	2	$\text{PbO}_2 (\text{u})$	$+1,455$
$\text{Cl}^- + 3\text{H}_2\text{O}$	6	$\text{ClO}_3^- + 6\text{H}^+$	$+1,45$
$\text{Cr}^{3+} + 4\text{H}_2\text{O}$	3	$\text{CrO}_4^{2-} + 8\text{H}^+$	$+1,477$
$\text{Mn}^{2+} + 4\text{H}_2\text{O}$	5	$\text{MnO}_4^- + 8\text{H}^+$	$+1,51$
$\text{Cl}_2 (\text{грм-лб}) + 2\text{H}_2\text{O}$	2	$2\text{HClO} + 2\text{H}^+$	$+1,63$
$2\text{H}_2\text{O} (\text{г})$	2	$\text{H}_2\text{O}_2 + 2\text{H}^+$	$+1,77$
2SO_4^{2-}	2	$\text{S}_2\text{O}_8^{2-}$	$+2,0$
2F^-	2	F_2	$+2,87$

3. Դժվարալուծ նյութերի լուծելիության արտադրյալները
(18—25°C)

Նյութը	Լուծելիության արտադրյալը, լԱ	Նյութը	Լուծելիության արտադրյալը, լԱ
$\text{Al}(\text{OH})_3$	$5,1 \cdot 10^{-33}$	Hg_2Cl_2	$3,8 \cdot 10^{-18}$
Ag_2S	$5,9 \cdot 10^{-50}$	$\text{Mg}(\text{OH})_2$	$5,5 \cdot 10^{-12}$
AgCl	$1,1 \cdot 10^{-10}$	MgCO_3	$2 \cdot 10^{-4}$
AgBr	$4 \cdot 10^{-13}$	MgC_2O_4	$8,6 \cdot 10^{-5}$
AgI	$1,5 \cdot 10^{-16}$	MgNH_4PO_4	$6,5 \cdot 10^{-13}$
Ag_3AsO_3	$4,5 \cdot 10^{-19}$	$\text{Mn}(\text{OH})_2$	$4 \cdot 10^{-14}$
Ag_3AsO_4	$1,08 \cdot 10^{-22}$	MnCO_3	$8,8 \cdot 10^{-14}$
As_2S_3	$4 \cdot 10^{-29}$	MnS	$7 \cdot 10^{-16}$
$\text{Ba}(\text{OH})_2$	$5 \cdot 10^{-8}$	$\text{Pb}(\text{OH})_2$	$1 \cdot 10^{-15}$
BaCO_3	$8,1 \cdot 10^{-9}$	PbCl_2	$2,1 \cdot 10^{-5}$
BaC_2O_4	$1,1 \cdot 10^{-7}$	PbBr_2	$9,2 \cdot 10^{-6}$
BaSO_4	$1,1 \cdot 10^{-10}$	PbI_2	$8,1 \cdot 10^{-9}$
BaCrO_4	$1,6 \cdot 10^{-10}$	PbSO_4	$1,0 \cdot 10^{-8}$
$\text{Bi}(\text{OH})_3$	$4,3 \cdot 10^{-31}$	PbS	$3,6 \cdot 10^{-29}$
Bi_2S_3	$1,6 \cdot 10^{-72}$	PbCrO_4	$1,8 \cdot 10^{-14}$
$\text{Ca}(\text{OH})_2$	$5,5 \cdot 10^{-6}$	$\text{Zn}(\text{OH})_2$	$1,8 \cdot 10^{-14}$
CaCO_3	$1,2 \cdot 10^{-8}$	ZnCO_3	$6 \cdot 10^{-11}$
CaC_2O_4	$1,78 \cdot 10^{-9}$	ZnS	$7,4 \cdot 10^{-27}$
CaCrO_4	$2,3 \cdot 10^{-2}$	$\text{Cd}(\text{OH})_2$	$5,9 \cdot 10^{-15}$
CaSO_4	$1,3 \cdot 10^{-4}$	CdS	$7,9 \cdot 10^{-27}$
$\text{Ca}_3(\text{PO}_4)_2$	$1 \cdot 10^{-25}$	CdCO_3	$9,2 \cdot 10^{-12}$
$\text{Cu}(\text{OH})_2$	$1,2 \cdot 10^{-12}$	$\text{Co}(\text{OH})_2$	$2,0 \cdot 10^{-15}$
CuS	$3,2 \cdot 10^{-38}$	$\text{CoS} (\alpha)$	$4,0 \cdot 10^{-21}$
SrSO_4	$2,8 \cdot 10^{-7}$	$\text{CoS} (\beta)$	$2,0 \cdot 10^{-25}$
SrC_2O_4	$5,6 \cdot 10^{-8}$	CoCO_3	$8 \cdot 10^{-13}$
SrCO_3	$1,6 \cdot 10^{-9}$	$\text{Ni}(\text{OH})_2$	$6,3 \cdot 10^{-18}$
$\text{Cr}(\text{OH})_3$	$6,3 \cdot 10^{-31}$	$\text{NiS} (\alpha)$	$3,2 \cdot 10^{-19}$
$\text{Fe}(\text{OH})_2$	$1,64 \cdot 10^{-14}$	$\text{NiS} (\beta)$	$1 \cdot 10^{-24}$
FeS	$3,7 \cdot 10^{-19}$	$\text{NiS} (\gamma)$	$2,0 \cdot 10^{-26}$
$\text{Fe}(\text{OH})_3$	$1,1 \cdot 10^{-36}$	NiCO_3	$6,6 \cdot 10^{-9}$
HgS	$4,0 \cdot 10^{-53}$		

1. Ազոտական թթու: 6 ն HNO_3 : 385 մլ խիտ HNO_3 -ը (խտությունը՝ 1,42 գ/սմ³) նոսրացնել թորած ջրով մինչև 1 լ:
2. Աղաթթու: 2 ն HCl : 167 մլ խիտ HCl -ը (խտությունը՝ 1,19 գ/սմ³) խառնել 833 մլ թորած ջրի հետ:
3. Մծմբական թթու: 2 ն H_2SO_4 : 945 մլ թորած ջրի վրա դանդաղ ավելացնել 55 մլ խիտ H_2SO_4 (խտությունը՝ 1,84 գ/սմ³)՝ անընդհատ խառնելով:
4. Քացախաթթու: 2 ն CH_3COOH : 116 մլ խիտ քացախաթթուն խառնել 884 մլ թորած ջրի հետ:
5. Ամոնիակի ջրային լուծույթ: 2 ն NH_4OH : 133 մլ խիտ ամոնիակի լուծույթը (խտությունը՝ 0,9 գ/սմ³) խառնել 687 մլ ջրի հետ:
6. Բարիումի հիդրօքսիդի լուծույթ: 0,4 ն $\text{Ba}(\text{OH})_2$: 1 լ հազեցած ջրային լուծույթը պարունակում է 72 գ $\text{Ba}(\text{OH})_2$:
7. Կալիումի հիդրօքսիդի լուծույթ: 2 ն KOH : 112 գ KOH -ը լուծել քիչ քանակությամբ ջրի մեջ և նոսրացնել մինչև 1 լ:
8. Կրաջուր: 0,05 ն $\text{Ca}(\text{OH})_2$: 1 լ հազեցած ջրային լուծույթը պարունակում է 1,3 գ CaO :
9. Նատրիումի հիդրօքսիդի լուծույթ: 2 ն NaOH : 80 գ NaOH -ը լուծել քիչ քանակությամբ ջրի մեջ և նոսրացնել մինչև 1 լ:
10. Ալյումինոն: 0,1%-անոց լուծույթ՝ $(\text{NH}_4)_3\text{C}_6\text{H}_5\text{O}_2(\text{COO})_3$: 1 գ ալյումինոնը լուծել 1 լ ջրի մեջ:
11. Ամոնիումի բուգմասուլֆիդ: $(\text{NH}_4)_2\text{S}_2$: 1 լ 6 ն ամոնիումի սուլֆիդի լուծույթը թափահարել 20 գ ծծմբի փոշու հետ, թողնել 1 օր, ապա ֆիլտրել:
12. Ամոնիումի սուլֆիդ: $(\text{NH}_4)_2\text{S}$: 200 մլ խիտ ամոնիակի լուծույթը հազեցնել ծծմբաջրածնով, ավելացնել ևս 200 մլ խիտ ամոնիակի լուծույթ և նոսրացնել ջրով մինչև 1 լ:
13. Նատրիումի արսենատ: 1 ն լուծույթ $\text{Na}_3\text{AsO}_4 \cdot 12\text{H}_2\text{O}$: 141 գ նատրիումի արսենատը լուծել ջրի մեջ և նոսրացնել ջրով մինչև 1 լ:
14. Նատրիումի արսենիտ: 1 ն լուծույթ NaAsO_2 : 13 գ ալդ նյութից լուծել ջրում և նոսրացնել մինչև 1 լ:
15. Բենզիդիլ: $\text{C}_{12}\text{H}_8(\text{NH}_2)_2$: 30%-անոց քացախաթթվում բենզիդիլի հազեցած լուծույթ:

16. Նատրիումի, կապարի և պղնձի հեֆաանիտիա: $\text{Na}_2\text{Pb}[\text{Cu}(\text{NO}_2)_6]$: 2 գ նատրիումի նիտրիտը, 0,9 գ պղնձի աղատառք և 1,6 գ կապարի աղատառք լուծել 15 մլ թորած ջրում՝ նախօրոք թթվեցրած 0,2 մլ 30%-անոց քացախաթթվով:
17. Գիպսաջուր: $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$: Գիպսի հաղեցած ջրային լուծույթ է (պարունակում է 1 լ ջրում 2,6 գ CaSO_4):
18. Գիմեթիլգլիօֆան (Չուլտեի ռեակտիվ): 1%-անոց լուծույթ՝ $(\text{CH}_3\text{CNOH})_2$: 1 գ դիմեթիլգլիօֆանը լուծել 100 մլ 95%-անոց էթիլալկոհոլի մեջ:
19. Գիտիզոն (դիֆենիլթիոկարբալդոն): $(\text{C}_6\text{H}_5\text{N}_2\text{H})_2\text{CS}$: 0,01 գ նշված նյութից լուծել 100 մլ CCl_4 -ում կամ CHCl_3 -ում և պահել ապակյա մուգ սրվակում: Բեակտիվը պիտանի է 3—4 օր:
20. Գիֆենիլամին: $(\text{C}_6\text{H}_5)_2\text{NH}$: 1 գ դիֆենիլամինը լուծել 100 մլ խիտ H_2SO_4 -ի մեջ (խտությունը՝ 1,84 գ/սմ³):
21. Յոդաջուր: $\text{I}_2 + \text{KI}$: 1,3 գ I_2 -ն ու 3 գ KI -ը լուծել 25 մլ ջրում և նոսրացնել մինչև 1 լ:
22. Կալիումի հեֆաանիդրօֆանատիմոնատ (V): $\text{K}[\text{Sb}(\text{OH})_6]$: 22 գ ռեակտիվը լուծել 1 լ եռացող ջրում և շարունակել եռացնել 3—5 րոպե մինչև աղի լրիվ լուծվելը: Սառչելուց հետո վրան ավելացնել 35 մլ 6 ն կալիումի հիդրօքսիդի լուծույթ, թողնել որոշ ժամանակ ապա ֆիլտրել:
23. Կալիումի հեֆաացիանաֆեռատ (III): 1 ն լուծույթ՝ $\text{K}_3[\text{Fe}(\text{CN})_6]$: 110 գ աղը լուծել թորած ջրում և նոսրացնել մինչև 1 լ:
24. Կալիումի հեֆաացիանաֆեռատ (II): 1 ն լուծույթ՝ $\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6]$: 105,6 գ աղը լուծել ջրում և նոսրացնել մինչև 1 լ:
25. Մագնեզիայի խառնուրդ: $\text{MgCl}_2 + \text{NH}_4\text{Cl} + \text{NH}_4\text{OH}$: Ջրում լուծել 100 գ $\text{MgCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O}$ ու 100 գ NH_4Cl , ավելացնել 50 մլ խիտ NH_4OH և նոսրացնել ջրով մինչև 1 լ:
26. Մոլիբդենային հեղուկ: $(\text{NH}_4)_2\text{MoO}_4 + \text{HNO}_3$: 1 լ ջրում լուծել 150 գ ամոնիումի մոլիբդատը, ստացվածն ավելացնել 1 լ

խիտ ապտական թթվի վրա (խտությունը $1,2 \text{ գ/սմ}^3$) և թողնել 48 ժամ: Անհրաժեշտության դեպքում լուծույթը նստվածքի վրայից լըցնել ասպակի մուգ սրվակի մեջ և պահել:

27. Նատրիումի ֆիդոֆոսֆատ: 1 ն լուծույթ^* $\text{Na}_2\text{HPO}_4 \cdot 12\text{H}_2\text{O}$: 120 գ աղը լուծել ջրում և նստացնել մինչև 1 ր:

28. Նատրիումի ֆեհաճիտոկոբալտատ (III): $\text{Na}_2[\text{Co}(\text{NO}_2)_6]$: 50 մլ ջրում լուծել 21 գ նատրիումի կարիտը և 29 գ $\text{Co}(\text{NO}_2)_2 \cdot 6\text{H}_2\text{O}$ -ը: Թթվեցնել 1 մլ 80%-անոց քացախաթթվով: Բողնել 24 ժամ և ֆիլտրել: Այդ նստացնել ջրով մինչև 100 մլ և պահել ասպակի մուգ սրվակի մեջ:

29. Նատրիումի ֆեհոսպրուսիդ: 3%-անոց լուծույթ՝

$\text{Na}_2[\text{Fe}(\text{CN})_5\text{NO}]$: 3 գ ռեակտիվը լուծել 97 մլ ջրում:

30. Նատրիումի սուլֆիդ (որպես խմբային ռեակտիվ): $\text{Na}_2\text{S} \cdot 9\text{H}_2\text{O} + 4\text{NaOH}$: 1 և ջրում լուծել 480 գ նատրիումի սուլֆիդ և 40 գ NaOH :

31. α -նիտրոզո- β -նավթալ (հլինսկու ռեակտիվ)¹
 $\text{C}_{10}\text{H}_9(\text{NO})\text{OH}$: 18 գ ռեակտիվին ավելացնել 1 և 56%-անոց քացախաթթու, թողնել որոշ ժամանակ, այնուհետև զգուշորթվաձք լուծույթը անջատել նստվածքից դեկոնտաշիայի միջոցով:

32. 8-օսիֆինոլին: $\text{C}_9\text{H}_5\text{NOH}$: 2,5 գ ռեակտիվը լուծել 100 մլ 6%-անոց քացախաթթվում:

33. Անագի փորիդ: $\text{SnCl}_2 \cdot 2\text{H}_2\text{O}$: 95 գ աղը լուծել 500 մլ խիտ աղաթթվի մեջ, թողնել մինչև լուծույթի պարզակեր, այնուհետև նստացնել ջրով մինչև 1 ր:

34. Զրածնի պերօքսիդ: 3%-անոց լուծույթ՝ H_2O_2 : 10 մլ 30%-անոց ջրածնի պերօքսիդը նստացնել ջրով մինչև 100 մլ:

35. Դրիս-կոսպայի ռեակտիվ: $\text{H}[\text{SO}_3\text{C}_6\text{H}_4\text{NH}_2] + \text{C}_{10}\text{H}_7\text{NH}_2$
Պատրաստել երկու լուծույթ. ա) 1,5 գ սուլֆանիլաթթուն լուծել 500 մլ 3 Մ քացախաթթվում, բ) 1 գ α -նավթիլամինը ($\text{C}_{10}\text{H}_7\text{NH}_2$) լուծել 75 մլ ջրում և ավելացնել 3 Մ քացախաթթու մինչև 500 մլ: Այնուհետև ստացված երկու լուծույթները խառնել իրար:

36. Նիտրի ռեակտիվ: $\text{Na}_2[\text{HgI}_4] + \text{NaOH}$: 115 գ HgI_2 -ն ու 80 գ KI -ը լուծել ջրում և նստացնել մինչև 500 մլ: Ավելացնել 500 մլ 6 ն NaOH -ի լուծույթ:

37. Ֆատուգուլի ռեակտիվ: $\text{AgNO}_3 + \text{KNO}_3 + \text{NH}_4\text{OH}$: 1,7 գ AgNO_3 -ը և 25,2 գ KNO_3 -ը լուծել 0,25 Մ NH_4OH -ի 1 և լուծույթում:

38. Ֆոսֆորմոլիդենային քրու: 5%-անոց լուծույթ՝ $\text{H}_2[\text{P}(\text{MoO}_4)_3]$: 5 գ թթուն լուծել 95 մլ ջրում:

39. Քլորօջուր: Cl_2 : Հագեցած ջրային լուծույթ:

40. Անտիմոնի (III) փորիդ: 1 ն լուծույթ՝ SbCl_3 : 114 գ աղը լուծել ջրում: ավելացնել աղաթթու այնքան, մինչև լուծվի պղտորությամբ, ապա նստացնել ջրով մինչև 1 ր:

ԸՆԴՅՈՒՆՆԵՐ ԽԱՌՆՈՒԹՅՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ամոնիակային՝ $\text{NH}_4\text{OH} + \text{NH}_4\text{Cl}$, $\text{pH} = 9,3$: Խառնել հավասար ծավալով ամոնիակի և ամոնիումի քլորիդի 0,1 Մ ջրային լուծույթներ:

Ացետառային՝ $\text{CH}_3\text{COOH} + \text{CH}_3\text{COONa}$, $\text{pH} = 4,7$: Խառնել հավասար ծավալով քացախաթթվի և նատրիումի ացետատի 0,1 մ ջրային լուծույթներ:

Ֆորմիառային՝ $\text{HCOOH} + \text{HCOONa}$, $\text{pH} = 3,7$: 2,8 գ նատրիումի ֆորմիատը լուծել 100 մլ 98%-անոց մրջնաթթվի մեջ:

Ինդիկատորների պատրաստումը

Ինդիկատորը	pH-ի միջակայքը	Գունավորումը		Պատրաստման եղանակը
		թթվային լուծույթում	հիմնային լուծույթում	
Մեթիլօրանի, 0,1%-անոց լուծույթ	3,1—4,4	վարդագույն ղեղին	0,1 գ ինդիկատորը լուծել 100 մլ ջրում	
Լակմուս, 0,5%-անոց լուծույթ	5,0—8,0	կարմիր	կապույտ	0,5 գ ինդիկատորը լուծել 100 մլ ջրում
Ֆենոլֆթալեին 0,1%-անոց լուծույթ	8,0—10,0	անկույն	կարմիր	0,1 գ ինդիկատորը լուծել 100 գ էթիլալկոհոլի մեջ
Օսլալի լուծույթ	—	—	—	2 գ լուծելի օսլան խառնել 5 մլ ջրի հետ, վրան ավելացնել 500 մլ եռացող ջրի, եռացնել 2—3 րոպե: Ստանդարտ հետ վրան կաթնցնել 5 կաթիլ տոլուոլ

ՕՐՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաեխանյան Ա. Գ. Որակական քիմիական անալիզի տեսական հիմունքները: Երևան, «Լույս», 1966:

Алексеев В. Н. Курс качественного химического микроанализа. Изд. «Химия», 1973.

Крешков А. П. Основы аналитической химии. т. 1. Изд. 3-е, М., «Химия», 1970.

Клячко Ю. А., Шапиро С. А. Курс химического качественного анализа. Госхимиздат. 1960.

Селезнев К. А. Аналитическая химия. М., 1973.

Цитович И. К. Курс аналитической химии. М., «Высшая школа», 1977.

Лурье Ю. Ю. Справочник по аналитической химии. Изд. 2-е, «Химия», 1965.

Справочник химика. Под редакцией Б. П. Никольского. М.-Л., «Химия», 1964—1965.

Առաջաբան	3
Ներածություն	-4
Կատիոնների դասակարգումը	9

Գլուխ առաջին

Առաջին խմբի կատիոնների ռեակցիաները	11
--	----

Գլուխ երկրորդ

Երկրորդ խմբի կատիոնների ռեակցիաները	18
Ընդհանուր բնութագիրը	18
Մասնակի ռեակցիաները	12
Կատիոնների II և I խմբերի խառնուրդի վերլուծություն	
ընթացքը	26
Առաջադրանք	31
Ստուգողական հարցեր և խնդիրներ	32

Գլուխ երրորդ

Երրորդ խմբի կատիոնների ռեակցիաները և վերլուծության	
ընթացքը	-35
Ընդհանուր բնութագիրը	35
Մասնակի ռեակցիաներ	37
Կատիոններ III խմբի վերլուծության ընթացքը	56
Ամանիակային մեթոդ	56
Պերոքսիդային մեթոդ	60
Առաջադրանք	62
Ստուգողական հարցեր և խնդիրներ	63

Գլուխ չորրորդ

Չորրորդ խմբի կատիոնների ռեակցիաները և վերլուծության	
ընթացքը	66
Ընդհանուր բնութագիրը	66
Մասնակի ռեակցիաները	67
Կատիոնների IV խմբի վերլուծության ընթացքը	77

Գլուխ հինգերորդ

Հինգերորդ խմբի կատիոնների ռեակցիաները և վերլուծության	
ընթացքը	-80

Կատիոնների V խմբի վերլուծության ընթացքը	86
Ստուգողական հարցեր և խնդիրներ	87
Կատիոնների V—I խմբերի խառնուրդի վերլուծությունը	89

Գլուխ վեցերորդ

Անիոնների վերլուծությունը

Ընդհանուր բնութագիրը, անիոնների դասակարգումը	93
Անիոնների առանձին խմբերի բնութագիրը	94
I խմբի անիոնների մասնակի ռեակցիաները	95
II վերլուծական խմբի անիոնների բնորոշ ռեակցիաները	101
Անիոնների III խմբի բնորոշ ռեակցիաները	106
Անիոնների վերլուծությունը	109
I խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը	112
II խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը	114
III խմբի անիոնների խառնուրդի վերլուծությունը	116
Առաջադրանք	117
Ստուգողական հարցեր և խնդիրներ	117

Գլուխ յոթերորդ

Չոր և չորս վերլուծությունը	120
Հալվելի անիոններ	125
Ռեակտիվների պատրաստումը	132
Բուֆերային խառնուրդների պատրաստումը	135
Ինդիկատորների պատրաստումը	136
Ստուգողական գրականություն	137
Բովանդակություն	138



Միլվա Միհրանի Արաքսյան

Վերլուծական քիմիայի գործնական
աշխատանքներ
I մաս որակական վերլուծություն

ՄԻԼՎԱ ՄԻՀՐԱՆԻ ԱՐԱՔՍՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

I ՄԱՍ ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՐՆԱՐԿ

Գյուղատնտեսական մասնագիտությունների ուսանողների համար

Մանուկեա խմբագիր՝ Լ. Ն. ԱՂԱՅԱՆ

Խմբագիր՝ Ս. Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Տեխն. խմբագիր՝ Շ. Ա. ԱԿԱՍՅԱՆ

Վերատպող սերագիր՝ Ժ. Ա. ԱՂԱՅԱՆ

Հանձնված է արտագրության 28.6.1991 թ.

Ստորագրված է տպագրության 20.1.92 թ.

Չափեր՝ 60x84 1/16: Բուլվեր՝ №1:

5,5 հրատ, մամ., 8,6 տպ. մամ.:

Տպագրությունը բարձր

Պատվեր 131 Տպարանակ 600 Գինը՝ 3 ոսկր.

Երևանի տնտեսարտական-տնտեսարտական ինստիտուտի տպարան,
375025, Երևան, Նալբանդյան 128:

Типография Ереванского зоотехническо-ветеринарного института,
375025, Ереван, ул. Налбандяна, 128



«ԱՍՈՂԻԿ» հրատարակչություն

Ստորագրված է տպագրության 14.07.2000թ.

Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա

Ֆորմատ՝ 60x84/16

Թուղթ՝ օֆսեթ

Պատվեր №25

Տպաքանակ՝ 200:

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:

Ք. Երևան, Ավան, Չարենցի 9/22

Հեռ. 58.22.99 40.49.82

E-mail: asogik@hragir.aua.am